19 ՓԵՏՐՈՒԱՐ 2013 ԵՐԵՔՇԱԲԹԻ 21(5104)

Ազգ
Azg

ISSN: 1829-1651

# Հակառակորդը սահմանում ակտիվացել է

Ադրբեջանական բանակի առաջատար ստորաբաժանումները փետրվարի 16-18-ը տարբեր տրամաչափերի հրաձգային զենքերից ղարաբաղյան դիրքերի ուղղությամբ արձակել են 1,500-ից ավելի կրակոցներ, որոնց մի մասը «СВД» եւ «Իստիգլալ» տիպի դիպուկահար զենքերից:

«**Ազգին**» ԼՂՀ ՊԲ-ից տեղեկացրին, որ հակառակորդի ակտիվությունը ճնշելու համար ՊԲ դիրքապահ ստորաբաժանումները դիմել են պատասխան գործողությունների եւ շփման գոտու երկարությամբ հաստատել լիարժեք վերահսկողություն:

Վերջին երկու օրվա ընթացքում հրադադարի ինտենսիվ խախտումներ արձանագրվել են երկրի հյուսիսային, արեւելյան եւ հարավարեւելյան հատվածներում տեղակայված մարտական դիրքերի ուղղությամբ:

Հիշեցնենք, որ մի քանի օր առաջ իրավիճակը լարված էր նաեւ Տավուշի մարզի սահմանամերձ գյուղերում: Հակառակորդը 2 օր շարունակ գնդակոծել է Չինարի, Այգեպար, Ներքին Կարմիրաղբյուր, Մովսես գյուղերը: Կրակոցները հիմնականում ուղղված էին խաղաղ բնակչության դեմ: Միայն հայկական կողմի պատասխան կրակոցներից թշնամին լռել է, եւ սահմանին կրկին հաստատվել է խաղաղություն: Գնդակոծության հետեւանքով վնասվել էին գյուղի տասնյակ տներ, մեքենաներ, վիրավորվել էր 22-ամյա պայմանագրային զինծառայող Գեւորգ Մելիքբեկյանը: ԼՂՀ ՊԲ-ից եւ ՀՀ ՊՆ-ից տեղեկացնում են, որ հայկական կողմը լիարժեքորեն վերահսկում է իրավիճակը:

Հ. Հ.

# Ընտրություններին մասնակցել է ընտրողների 60,05 տոկոսը, Exit Poll-ով հաղթում է ՀՀԿ թեկնածուն




Անկախ Հայաստանի նախագահական վեցերորդ ընտրությունները նախորդ ընտրություններից տարբերվում էին, այո: Նախ նրանով, որ սոցիալական ցանցերն ու ստվարացած բաց լրատվամիջոցները, հատկապես արագ արձագանքող ցանցային ԶԼՄ-ների առկայությունը դժվարացրել էին ընտրակեղծիքները: Բացի դրանից՝ ընդդիմադիր եւ այլընտրանքային խորհրդարանական ուժերը թեկնածու չէին առաջադրել գործող նախագահին՝ ՀՀԿ լիդերին առանձնապես դժվարհաղթելի մրցակցից զրկելով փաստորեն: Րաֆֆի Հովհաննիսյանը, Հրանտ Բագրատյանը քարոզարշավի ընթացքում փորձ էին անում լրացնել այդ բացը իրենց ակտիվ քարոզարշավով: Թե ի վերջո այս երկու եւ ուրիշ այլ հանգամանքներ ինչպե՞ս են ազդել ընտրությունների ընթացքի վրա, եւ արդյո՞ք վստահություն ներշնչելու են այս ընտրությունների արդյունքները՝ կիմանանք արդեն այսօր երեկոյան, ընտրությունների նախնական արդյունքների հրապարակմամբ եւ միջազգային դիտորդական կազմակերպությունների՝ այսօր հնչելիք նախնական գնահատականներից, սակայն ընդհանուր պատկերը վերջնականապես կպարզվի առաջիկա շաբաթվա ընթացքում: Մանավանդ հանրահայտ է՝ Հայաստանին հիմա առավել հարկավոր է վստահ քայլով, ժողովրդավարական ընտրություններով ընտրված լեգիտիմ նախագահ, ով պետք է լուծի երկրին այս դժվարին ժամանակաշրջանում ներկայացող պրոբլեմները, իսկ դրա համար հարկավոր են ոչ միայն ընտրությունների արդյունքների վստահելի թվեր, դիտորդների բարձր գնահատականներ, այլեւ ընտրություններին մասնակցած ու չմասնակցած քաղաքական ուժերի ներկայացուցիչների՝ ընտրությունների արդյունքները ընդունումը եւս:

*Տես էջ 2*

# Բաց նամակ Իլհամ Ալիեւին Թուրքիայից

## *Դիմում են թուրքական քաղաքացիական հասարակության կազմակերպությունները*

**Նամակի մասին փետրվարի 17-ի համարում տեղեկացրել էր Կ. Պոլսո «Հայթերթ» կայքէջը: Նամակը, ըստ տեղեկության, կազմել են Հելսինկյան քաղաքացիական ասամբլեան, «Ոչ ռասիզմին եւ ազգայնամոլության» միությունը, Մարդու իրավունքների միության Ստամբուլի մասնաճյուղի «Ռասիզմի եւ խտրականության դեմ պայքարի» եւ «Առերեսման» կազմակերպությունները:**

**Այս կազմակերպությունների տարածած հաղորդագրության մեջ ասվում է. «Նամակ ենք հղում Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւին: Ադրբեջանցի գրող Աքրամ Այլիսլին երկու ամիս ի վեր դաժան հալածանքի է ենթարկվում միայն այն պատճառով, որ արտահայտվել է հայերի հետ բարեկամության օգտին: Ամբոխը նրա տան առջեւ այրում է գրողի գրքերը: Նրա ականջը կտրողին պարգեւ են խոստանում: Մենք՝ վերոհիշյալ կազմակերպությունների ներկայացուցիչներս, փետրվարի 18-ին Մարդու իրավունքների միության Ստամբուլի մասնաճյուղի շենքում հրավիրված ասուլիսին հրապարակելու ենք մեր կազմած նամակը եւ փոստով ուղարկելու հասցեատիրոջը: Սպասում ենք միջոցառմանը մասնակցությունը բոլոր նրանց, ովքեր դեմ են ռասիզմին, ատելությանն ու թշնամանքին»:**

Հ. Չ.

# Մախառումներ էլեկտրոնային հաշվետվություններին անցնելու համար

## *Պետական համակարգում նույն կիսատպռատությունն ու խառնաշփոթն են*

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

**Նոր հարկատեսակին՝ եկամտային հարկին եւ այս հարկատեսակի վերաբերյալ հարկային մարմիններին հաշվետվության ներկայացման էլեկտրոնային եղանակին անցնելու եւ այս գործընթացի անկազմակերպ լինելուն մեկ անգամ արդեն անդրադարձել ենք («Նույնականացման քարտի տրամադրում՝ պետական համակարգի հերթական փնթի եւ անկազմակերպ աշխատանքը», «Ազգ», 29 նոյեմբերի 2012):**

**Համառոտ հիշեցնենք, թե խոսքն ինչի մասին է, հատկապես նկատի ունենալով, որ գործընթացը դեռ շարունակվում է նույն ձեւով՝ նույն խառնաշփոթով եւ սխալներով:**

**Առաջին իսկ փուլը՝ նույնականացման (ID) քարտերի տրամադրումը սկսվեց եւ շարունակվում է ոստիկանության բաժանմունքներում քարտ ստանալու համար ժամեր տեւող նույն հերթերով: Քարտի տրամադրման ժամկետները նոյեմբեր, դեկտեմբեր եւ հունվար ամիսներին խախտվում էին, մարդիկ դրանք ստանում էին նախապես նշված ժամկետից 15-20 օր ուշացումներով: Դա բացատրվում էր ծրագրային խնդիրներով, բայց ի՞նչ մեղք ունեն քարտ ստացողները, որ ամեն ինչ նախապես չի կարգավորվում, հետո գործի դրվում: Անշուշտ, նոր գործընթաց է, եւ հնարավոր են որոշ թերություններ, բայց եթե իսկապես խոսքը որոշ եւ փոքր թերությունների մասին է:**

*Տես էջ 8*

# Ռուսաստանում արդեն 131 միլիարդատեր կա

## *Առաջին տեղում Ուսմանովն է*

**2013 թվականին Ռուսաստանում դոլարային միլիարդատերերի թիվը հասել է 131-ի, ինչը պատմական ռեկորդ է: Վարկանիշների ցանկը կազմած CEO հանդեսը հաղորդում է, որ 1 տարում միլիարդատերերի թիվն ավելացել է 11-ով:**

**2012-ին երկրում ապրում էր 120, 2011-ին՝ 114 միլիարդատեր: Ճգնաժամային 2009-ին նրանց թիվը նախորդ տարվա 101-ից իջել էր 49-ի, իսկ 2010-ին հասել էր 77-ի:**

**Մեկ միլիարդ դոլարից մեծ կապիտալ ունեցող ռուսաստանցի գործարարների ընդհանուր կարողությունը 2012-ի 131 միլիարդից 2013-ին հասել է 147 միլիարդի:**

**CEO-ի տվյալներով, այժմ Ռուսաստանում ամենահարուստ մարդը «Մետալոինվեստի» սեփականատեր Ալիշեր Ուսմանովն է, որի կարողությունը 18,72 մլրդ դոլար է: Նա առաջին տեղն է զբաղեցնում նաեւ Bloomberg-ի եւ Forbes-ի համապատասխան ցանկերում:**

**Երկրորդ տեղում НЛМК ընկերության տնօրենների խորհրդի նախագահ Վլադիմիր Լիսինն է, որի կապիտալը գնահատվում է 17,2 մլրդ դոլար:**

**Երրորդ եւ չորրորդ տեղերը զբաղեցնում են «Ռենովա»-ի սեփականատեր Վիկտոր Վեքսելբերգը (15,94 մլրդ) եւ «Ալֆա-գրուպ»-ի ղեկավար Միխայիլ Ֆրիդմանը (15,32 մլրդ):**



**Ցանկի 5-րդ տեղում Միխայիլ Պրոխորովն է (15,25 մլրդ): Առաջին տասնյակի մեջ մտել են նաեւ «Սեւերստալի» սեփականատեր Ալեքսեյ Մորդաշովը, «Նովատեկի» համատեր Լեոնիդ Միխելսոնը, «Բազէլի» սեփականատեր Օլեգ Դերիպասկան, «Ինտերռոսի» նախագահ Վլադիմիր Պոտանինը եւ «Լուկօյլի» ղեկավար Վագիտ Ալեքպերովը:**

# Հայաստանում 6-րդ անգամ նախագահ են ընտրում

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Երբ այսօր առավոտյան «**Ազգը**» հայտնվի կրպակներում, նախագահական ընտրությունների քվեարկության արդյունքների ու հաշվարկների թվերը փոփոխված կլինեն: Ընտրությունների արդյունքների վերջնական պատկերը, միջազգային դիտորդների եւ թեկնածուների տեսակետները կներկայացնենք «**Ազգի**» վաղվա համարում: Մինչ այդ, ամփոփ ներկայացնում ենք փետրվարի 18-ի անցուդարձը: «Ես քվեարկել եմ հանուն Հայաստանի ապագայի, հանուն մեր քաղաքացիների եւ մեր ժողովրդի ապահովության», ասաց տիկնոջ՝ Ռիտա Սարգսյանի հետ ընտրատեղամաս այցելած գործող նախագահ, նախագահի թեկնածու **Սերժ Սարգսյանը**:




«Ես առաջին հերթին դիմում եմ իմ հիմնական մրցակից, շատ հարգարժան, գործող նախագահ Սերժ Սարգսյանին: Ավելի հերոսական, քան այն մեծ ավանդը, որ ինքն ունեցել է Արցախյան ազատամարտում, կլինի իր կողմից ժողովրդի հաղթանակի ընդունումը: Քաղաքացիական ամենամեծ գնահատականը կլինի հարգանքը ժողովրդի հանդեպ: Ընտրակաշառքների, բազմակի քվեարկության եւ այլ ընտրախախտումների ֆոնին ես կոչ եմ անում իր ենթակայության տակ գտնվող բոլոր տեղամասային շտաբների պետերին, մարզպետներին, գյուղապետներին հետ պահել այդ հակասահմանադրական եւ հակաժողովրդավարական գործելաոճից, որովհետեւ այս անգամ ժողովրդին ոչ մի բան հետ չի պահելու իրեն պատկանող հաղթանակից», երեկ ընտրություն կատարելուց հետո այսպիսի հայտարարություն է արել նախագահի թեկնածու **Րաֆֆի Հովհաննիսյանը**՝ հավելելով, որ փետրվարի 18-ը Հայաստանի նորագույն պատմության ամենաբախտորոշ օրն է:

Կնոջ եւ դստեր հետ ընտրատեղամաս այցելած նախագահի թեկնածու **Հրանտ Բագրատյանը** հայտնել է, թե չի կարծում, որ ընդհանրապես պարտություն կլինի: Իր շտաբում արդեն մի քանի օր ահազանգեր են ստանում, որ հանրապետության հյուսիսում ընտրակաշառք են բաժանում: «Երեք-չորս օր առաջ ավելի օպտիմիստ էի, բայց եղան ընտրակաշառքներ: Թող արդար ընտրություն լիներ, ով ուզում էր՝ հաղթեր: Կարեւորը, որ գնացքը գցես իր ճանապարհի մեջ: Չգիտեմ, թե ինչ հետընտրական զարգացումներ կլինեն, սակայն գիշերվանից այդ մասին եմ մտածում»:

*Տես էջ 3*

# «Ազգը» Կենտրոնական ընտրական հանձնաժողովում

## *Առաջին արդյունքների ամփոփում ԿԸՀ-ում*



2013թ. տեղի ունեցած ընտրությունները մնացյալ ընտրություններից չտարբերվեցին արտառոց իրադարձություններով, այս տարի ընտրողների անձնագրերում ընտրության մասնակցությունը հաստատող կնիքները հեշտությամբ անհետանում էին թաց անձեռոցիկների, ինչպես նաեւ տարատեսակ քիմիական միջոցների օգնությամբ: Դրա առթիվ «**Ազգը**» զրուցեց կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ **Տիգրան Մուկուչյանի** հետ, որն ասաց. «Թանաքանյութի ինքնիրեն անհետացման դեպքեր չեն գրանցվել, սակայն տեղի են ունեցել մի շարք արհեստական միջամտություններ, ըստ որի, տարբեր քիմիական նյութերով անհետացնում են թանաքանյութը: Անձնագրի միջից ոչ միայն դրոշմակնիքը, այլեւ որեւէ տվյալ արգելվում է ջնջելով հեռացնել: Այդ դրոշմակնիքը պետք է մնա անձնագրի մեջ եւ ժամանակի ընթացքում վերանա եւ արհեստական միջամտությունները անթույլատրելի են: Իսկ եթե որեւէ մեկը ջնջելով դրոշմակնիքը երկրորդ անգամ փորձի մուտք գործել ընտրական տեղամաս` կբացահայտվի, քանի որ նրա տվյալներն արդեն գրանցված են»:

Տ. Մուկուչյանը տեղեկացրեց, որ ստացված յուրաքանչյուր ահազանգից հետո զանգահարում են տեղամասային ընտրական հանձնաժողով եւ ճշտումներ կատարում. «Եղել են լրատվամիջոցներում շրջանառվող լուրեր, որոնք մեր ճշտումից հետո պարզ են դարձել, որ չեն համապատասխանում իրականությանը»:

Երեկ Կենտրոնական ընտրական հանձնաժողովում կազմակերպվեցին մի շարք ասուլիսներ, որոնց ընթացքում ԿԸՀ-ի աշխատակիցները, ինչպես նաեւ տարբեր գերատեսչությունների ներկայացուցիչները իրազեկում էին լրագրողներին ընտրական գործընթացի մանրամասները:

Արդարադատության նախարարի խորհրդական **Նիկոլայ Առուստամյանը** ներկայացրեց, թե ինչպես են տեղի ունեցել քվեարկությունը քրեակատարողական հիմնարկներում. «Քրեակատարողական հիմնարկներում այժմ կան շուրջ 4 742 անձինք, որոնցից 1 028-ը հնարավորություն ունեն մասնակցելու նախագահի ընտրությանը: Քրեակատարողական 12 հիմնարկներից միայն 7-ում է տեղի ունեցել ընտրական գործընթաց, դրանք են` Աբովյանի, Նուբարաշենի, Երեւան կենտրոնի, Վանաձորի, Վարդաշենի, Գորիսի եւ Արթիկի հիմնարկները»:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալ **Լաուրա Գալստյանն** էլ ընդգծեց, որ սահմանափակ ֆիզիկական հնարավորություններ ունեցող ընտրողների ընտրական իրավունքի իրականացման մատչելիության ապահովման համար իրականացվել են բոլոր միջոցները:

Իսկ առողջապահության նախարարության աշխատակազմի ղեկավար **Սուրեն Քրմոյանը** տեղեկացրեց, թե ինչպես է կազմակերպվել ստացիոնար բժշկական հաստատություններում ընտրական գործընթացը. «Այն մարդիկ, որոնք հիվանդության պատճառով հնարավորություն չեն ունեցել մասնակցել ընտրությանը, ապա 45 բժշկական հաստատություններում շրջիկ քվեատուփի միջոցով 1375 ընտրող մասնակցել է: Գործընթացին ներկա են գտնվել լրատվամիջոցների ներկայացուցիչներ, ինչպես նաեւ վստահված անձինք եւ դիտորդներ, եւ որեւէ միջադեպ չի գրանցվել: Ստացիոնար բժշկական հաստատություններում ընտրությանը Երեւանից մասնակցել են 673 անձ, Արմավիրի մարզից` 15, Կոտայքի մարզից` 129, Շիրակի մարզից` 48, Տավուշի մարզից` 7, Սյունիքի մարզից` 35, Լոռու մարզից` 73, Գեղարքունիքի մարզից` 292, Արարատի մարզից` 103, իսկ Արագածոտնում եւ Վայոց Ձորում նման ընտրություն չի կազմակերպվել»:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայության ղեկավար **Սեւակ Հովհաննիսյանն** էլ լրագրողներին ներկայացրեց նախագահի թեկնածուների նախընտրական քարոզչությունների կազմակերպման եւ անցկացման համար բացված հիմնադրամների ստուգման արդյունքները: Բանախոսը նշեց նաեւ, որ միայն Արման Մելիքյանը հիմնադրամ չբացեց, որի լիազոր ներկայացուցիչը պատճառաբանել է, որ թեկնածուն նախընտրական քարոզչության ընթացքում քարոզչական ծախս չի կատարել:

Ընտրական օրենսգիրքը դասակարգեց քարոզչական ծախսերը, որոնք կատարվում են բացառապես նախընտրական հիմնադրամների միջոցներից: Դրանք են` ԶԼՄ-ների միջոցով քարոզչության համար կատարված ծախսեր, դահլիճների եւ տարածքների վարձակալման, քարոզչական պաստառների պատրաստման եւ տեղադրման կապակցությամբ կատարված ծախսերը, ինչպես նաեւ քարոզչական տպագիր եւ այլ` քարոզչական բնույթ ունեցող նյութերի համար կատարվող ծախսերը: Նշենք, որ ընտրությունների մասով նախագահի թեկնածուն իրավունք ունի ծախսել առավելագույնը 100 մլն դրամ:

«ԶԼՄ-ների միջոցով առավելագույն քարոզչությամբ է հանդես եկել նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանը, որն իր հիմնադրամից կատարած 74 մլն 139 հզր դրամից 43 մլն 260 դրամը ծախսել է զանգվածային լրատվամիջոցներով քարոզչություն իրականացնելու համար, երկրորդ տեղում է նախագահի թեկնածու Րաֆֆի Հովհաննիսյանը, որը 57 մլն 301 հազարից 35 մլն 200 հազար դրամը ծախսել է ԶԼՄ-ների միջոցով քարոզչություն իրականացնելու համար: Հաջորդը նախագահի թեկնածու Հրանտ Բագրատյանն է, որն իր 5 մլն. 880 հազարից 3 768 հազար դրամը ծախսել է հեռուստատեսություններով քարոզչություն իրականացնելու համար:

Մյուս երեք թեկնածուները` Պարույր Հայրիկյանը, Անդրիաս Ղուկասյանը եւ Վարդան Սեդրակյանը ընդհանրապես չեն օգտվել վճարովի եթերաժամանակից», ասաց Սեւակ Հովհաննիսյանը եւ ավելացրեց. «Առավելագույն ծախսերի առումով երկրորդ տեղում են գտնվում թեկնածուների քարոզչական վահանակների վարձակալման ուղղությամբ կատարված ծախսերը, որի համար ամենաշատ ծախսը կատարել է Րաֆֆի Հովհաննիսյանը` 14 մլն 633 հազար դրամ ծախսել է արտաքին գովազդային վահանակներով քարոզչություն իրականացնելու համար, մասնավորապես` վարձակալել է 94 արտաքին գովազդային վահանակ: Իսկ Սերժ Սարգսյանը արտաքին գովազդային վահանակների համար ծախսել է 8 մլն 529 հազար դրամ: Անդրիաս Ղուկասյանն իր հիմնադրամի միջոցներից 4 մլն 91 հազար դրամն է ծախսել արտաքին գովազդի համար` վարձակալելով 34 վահանակ: Հրանտ Բագրատյանը իր հիմնադրամի միջոցների 2 մլն 120 հազարն է ծախսել վերոնշված գովազդի համար` վարձակալելով 15 գովազդային վահանակ, իսկ Պարույր Հայրիկյանը վարձակալել է ընդամենը 3 արտաքին գովազդային վահանակ` ծախսելով 495 հազար դրամ:

Դահլիճների եւ տարածքների վարձակալության մասով ծախս է կատարել միայն Սերժ Սարգսյանը` 300 հազար դրամ, իսկ մյուս թեկնածուները տարածքներ չեն վարձակալել, որը պայմանավորված է ընտրական օրենսգրքի ընձեռած հնարավորությունից, ըստ որի թեկնածուները իրավունք ունեն օգտվել անվճար հիմունքով տրամադրվող դահլիճներից եւ տարածքներից»:

Սեւակ Հովհաննիսյանը նշեց նաեւ, որ սրանք մինչեւ փետրվարի 9-ը ընկած ժամանակաշրջանի տվյալներ են: Իսկ փետրվարի 9-ից մինչեւ քվեարկության օրն ընկած ժամանակահատվածի վերաբերյալ տեղեկատվություն թեկնածուները կներկայացնեն փետրվարի 22-ին. «Թեկնածուների համար հեռուստատեսությունը եղել եւ մնում է քարոզչության ամենաարդյունավետ միջոց: Դա են վկայում թեկնածուների կողմից ծախսված միջոցները», եզրափակեց նա:

ՍԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

---

ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# Ընտրություններին մասնակցել է ընտրողների 60,05 տոկոսը, Exit Poll-ով հաղթում է ՀՀԿ թեկնածուն

*1-ին էջից*

**Առայժմ ներկայացնենք նախնական թվեր ըստ երեկ ժամը 21-ի շրջանում ԿԸՀ-ի հայտնած նախնական տվյալների` ընտրություններին մասնակցել է ընտրողների 60 տոկոսից մի փոքր ավելին` 1 518 407 ընտրող, ընդ որում ամենից բարձր մասնակցություն գրանցվել է Արարատի մարզում` 73,92 տոկոս, ամենից նվազ մասնակցությունը Երեւանում է եղել` 53,99 տոկոս:**

**Արդեն երկրորդ անգամ «Արմենյուզի» նախաձեռնած եւ Gallup-ի անցկացրած Exit Poll-ի արդյունքով, որը կատարվել է 19130 ընտրողների շրջանում, երբ նրանք դուրս են եկել ընտրությունից, հարցվածների 59 տոկոսի անանուն անկեղծացման արդյունքում քվեների բաշխվածությունն այս տեսքն է ունեցել. Սերժ Սարգսյան` 58 տոկոս, Րաֆֆի Հովհաննիսյան` 32,3 տոկոս, Պարույր Հայրիկյան` 3 տոկոս, Հրանտ Բագրատյան` 3 տոկոս, Անդրիաս Ղուկասյան` 1 տոկոս, Վարդան Սեդրակյան` 1 տոկոս, Արման Մելիքյան` 1 տոկոս, անվավեր քվեաթերթիկներ` 1 տոկոս:**

**ՀՀԿ գրասենյակում հենց երեկ Սերժ Սարգսյանի շտաբի անդամ Դավիթ Հարությունյանը հանգիստ եւ անհամեմատ բարձր որակով ընտրություն անվանեց փետրվարի 18-ի նախագահական ընտրությունները, իսկ ՀՀԿ-ական վերնախավը սպասում էր իր թեկնածուին` վստահ նրա ստացած բարձր քվեին ու հաղթանակին:**

**Ընդհանուր առմամբ երեկ իսկապես տեսանելի էր, որ ընտրողներն անկաշկանդ գնում են ընտրությունների, հեռուստաէկրաններն ու էլեկտրոնային լրատվամիջոցները մեծ աշխուժությամբ լուսաբանում էին ընտրական ողջ գործընթացը, ազատորեն խոսվում էր եւ ընտրախախտումներից, եւ դրանց ճշտումներն էին մանրամասն մատուցում: Ընդհանուր առմամբ` ընտրողի վստահությունը դեռեւս այնքան հեշտ ձեռք չի բերվում: Սկսենք ընտրողների թվից, որն այդպես էլ վստահություն չներշնչեց` 2,5 մլն-ից ավելի, քանի որ երկրի չափահաս բնակչության մի զգալի հասված արտագնա աշխատանքի է:**

**ԶԼՄ-ներում, այնուամենայնիվ, բեւեռացվածություն կար, թեեւ ոչ 2008 թվականի նման. հեռուստատեսություններով, էլի ինչպես ավանդաբար, ամեն ինչ նորմալ էր ընտրությունների ընթացքում, խաղաղ, առանց էական ընտրախախտումների, կայքերում եւ ֆեյսբուքում, ընդհակառակը, ընտրախախտումների այնպիսի բում էր, որ մտածում էիր, թե երկու դեպքում էլ ծայրահեղությունների հետ գործ ունենք: Կոնկրետ իմ թաղամասում (Ավանում) անցած խորհրդարանական ընտրություններին մարդկանց բացահայտ տաքսիներով եւ երթուղայիններով բերում էին ընտրության, այս անգամ դա համարյա տեսանելի չէր. կամ հարցերն ավելի վաղ էին լուծել, կամ էլ, Էդուարդ Շարմազանովի ասած` արջի ծառայություն մատուցողները քչացել էին: Համենայն դեպս` եւ ընտրողների ակտիվությունը նվազ չէր, եւ տրանսպորտային աժիոտաժը չկար, մարդկանց տեսանելի ոչ ոք չէր ուղղորդում: Իսկ առավել ենթադրելի է այն, որ ընտրությունների հայկական տարբերակն այնքան է բյուրեղացել, որ ոչ մի դիտորդ` տեղացի թե եվրոպացի, այլեւս չի կարող տեսնել այն տեխնոլոգիաները, որոնք հայտնի կդառնան միայն այն ժամանակ, երբ իշխանությունն ու իշխող կուսակցությունը փոխվեն: Համենայն դեպս, ՀՀԿ շտաբների մոտ հավաքված երիտասարդության, մեքենաների մեջ եղած ինչ-որ տպագիր ցուցակների առկայությունը հուշում էր, որ ինչ -որ տեխնոլոգիա է կիրառվում, որը դիտորդները կամ վստահված անձինք չեն կարող իմանալ, իմանան էլ` դժվար ապացուցելի է: Անձնագրում դրվող կնիքի թանաքի մասին նորից անհանգստություն կար, որ կարելի է թաց անձեռոցիկով մաքրել, կամ նախատեսվածից շուտ է անհետանում, սակայն հետո ամեն ինչ նորմալացավ: Մի խոսքով` իրականությունը հավանաբար հեռուստատեսությունների եւ կայքերի հաղորդածի մեջտեղում էր, որը հայտ է դեպի ապագա` ինչ-որ բան փոխելու, մեր կյանքի եւ ընտրական մշակույթի նոր որակների հավակնելու...**

**Համենայն դեպս` կայքերը լի էին ընտրախախտումների մասին հաղորդումներով: Ժամը 18:00-ի դրությամբ 263 խախտման հաղորդում էր գրանցված iditord.org կայքում: Ավանի քվեատուփի ճեղքը տեխնոլոգիական էր` ԿԸՀ-ից ճշտեցին, Արտաշատի 17/05 ընտրատեղամասում դիտորդի ներկայությամբ հինգ հարյուր քվեաթերթիկի լցոնումը ժխտվեց` ԿԸՀ նախագահ Տիգրան Մուկուչյանն ասաց, թե այդպիսի դիտորդ գրանցված չկա տվյալ տեղամասում, հանձնաժողովականներն էլ հերքեցին լցոնման փաստը: Էլի այդ կարգի մի ամբողջ շարք ընտրախախտումներ հերքվեցին: Լուր տարածվեց, որ Գյումրու 34/36 ընտրատեղամաս խախտումների մասին ահազանգով մեկնած «Ժառանգություն» կուսակցության խմբակցության ղեկավար Ռուբեն Հակոբյանի եւ ապա նույն տեղամաս ժամանած ՀՀԿ պատգամավոր Սուքիաս Ավետիսյանի միջեւ վեճ է ծագել, եւ Ռուբեն Հակոբյանին ոստիկանությունը բերման է ենթարկել: Մեկը քվեաթերթիկ կերավ, համացանցում երեւաց մի ավտոբուս, որտեղ փող էին բաժանում, ճիշտ է` դրամ չերեւաց:**

**Ֆեյսբուքի «Ընդմիշտ հեռանում եմ» խմբի էջում բազմաթիվ անվավեր դարձրած քվեաթերթիկներ տեսա, որտեղ ընտրել էին Քիմ Քարդաշյանին, Լեւոն Տեր-Պետրոսյանին, քաղաքական բնույթի կամ սրամիտ արտահայտություններ էին գրել` թարս բուսնած խիյարի եւ այլ թեմաներով, անվավեր դարձնելով քվեաթերթիկը:**

**Այսպես թե այնպես, ընտրություններն ավարտվեցին առանց միջադեպերի, հետեւում էին հազարավոր դիտորդներ, ու գոնե որպես առաջին գնահատական կարող ենք ասել, որ նախագահական ընտրությունները կայացան:** **Ս. Խ.**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960
060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը` «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Ընտրությո՞ւն, թե՞ պարտականություն

## «Րաֆֆիին եմ ընտրել, բայց մեկ է՝ չի անցնելու»




Հիմնական տպավորությունը, որը ստացա երեկվա մեր ընտրողներից, դա նրանց որպես պարտավորվածություն ընտրատեղամասեր ներկայանալն էր: Եկել էին ընտրության՝ արդեն իմանալով, որ նախագահը, մեկ է, արդեն ընտրված է, եւ իրենց ձայնը դեր չի խաղալու: Բայց քվեարկել էին, որովհետեւ դա ՀՀ քաղաքացու պարտականությունն է: Իրենց պարտականությունն իրենք կատարում են, սակայն հույս չունեն, որ առաջիկա 5 տարիներին Հայաստանի նախագահը նույնպես կառաջնորդվի նույն սկզբունքով, այսինքն՝ կկատարի ժողովրդի հանդեպ իր ունեցած պարտականությունները: Ընտրատեղամասերի առջեւ իմ հանդիպած ընտրողների մեծամասնությունը մտածում էր հենց այսպես՝ հուսահատված ենք եկել ընտրության, սակայն չգալ էլ չէինք կարող: Փոքր-ինչ համաձայն չեմ հուսահատություն բառին, քանի որ եթե ժողովուրդը գնում է ընտրության, ուրեմն դեռ հուսահատված չէ, ավելի ճիշտ է հուսահատությունը փոխարինել անորոշություն բառով, որովհետեւ մեր ընտրողների մեջ իրենց ապագայի, իրենց երկրի ապագայի հանդեպ ունեցած անորոշության զգացումն է ստիպում մտածել, որ իրենց ձայնը դեր չի խաղալու:

«Իսկ ինչպիսի՞ն պետք է լինի նախագահը» հարցիս մեծամասնության պատասխանը հետեւյալն էր՝ 7 թեկնածուներից եւ ոչ մեկը չունի այն որակները, որոնք անհրաժեշտ են նախագահին, եւ արժանիքները՝ նախագահ դառնալու համար: Ամեն դեպքում, ընտրողները, ստիպված, թե հոժարակամ, երեկ կատարեցին իրենց ընտրությունը: Օրինակ՝ **Սոնյա տատիկը**, որին հանդիպեցի 4/29 ընտրատեղամասից դուրս գալիս, ընտրության էր եկել ձեռնափայտով, ձեռքն էլ սրտին դրած, ասաց. «Րաֆֆիին եմ ընտրել, բայց մեկ է՝ չի անցնելու»: Նույն ընտրատեղամասի առջեւ հանդիպեցի նաեւ ԵՊՀ հայոց լեզվի պատմության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր **Ռուբեն Սաքապետոյանին**, որը ընտրության եկել էր կեսօրին, քանի որ նախորդ ընտրության ժամանակ դիտավորյալ ուշ երեկոյան էր եկել ընտրելու ու տեսել, որ իր փոխարեն մեկ ուրիշն արդեն քվեարկել է: «Բոլոր այս թեկնածուներն էլ ոչինչ չեն անելու, ուղղակի քաղաքացիական պարտք է, կատարում եմ: Բացի դրանից՝ եթե չգայի, հնարավոր է՝ իմ փոխարեն մեկ ուրիշը քվեարկեր իր ուզած ձեւով: Մեր արյան մեջ այդ կեղծելու բանը կա. ազնիվ ընտրություններ անել չենք կարողանում: Առանց այն էլ ոչ մի երկրում ընտրություններն իդեալական չեն լինում, եւ մեզ մոտ դրան գումարվում են թաղային լակոտ-լուկուտների խուժանությունը, կաշառակերությունը, աղքատությունը մարդկանց, որոնց կարելի է երկու կոպեկով կաշառել: Մարդիկ հիասթափված են ու չեն կարծում, որ իրենց ձայնը դեր կխաղա», ավելացնում է Ռուբեն Սաքապետոյանը:

Իսկ 44-ամյա **Մարինան**, որը քվեարկել էր 5/27 ընտրատեղամասում, նախագահի առաջին անելիքը համարեց երիտասարդներին աշխատանքով ապահովելը՝ ամեն մեկին իր գիտելիքներին արժանի աշխատանքով ապահովելը. «Կոնկրետ մեր ընտանիքը ապրում է արտասահմանից ստացվող ֆինանսական օգնությամբ, կյանքը պետք է լինի այնպիսին, որ մարդիկ կարողանան ապրել մեր երկրում ունեցած աշխատանքով»: Ըստ Մարինայի՝ նախագահը պետք է բարելավի սոցիալական պայմանները նաեւ այն մարդկանց, որոնք պաշտոնյա չեն:

Արաբկիր վարչական շրջանի 4/27 ընտրատեղամասում էլ ընտրողներն այնպես էին վրդովվել, որ ընտրատեղամասից դուրս էին գալիս առանց ընտրելու. վրդովմունքի պատճառը կուտակումներն էին: Կեսօրին 4/27 ընտրատեղամասում առաջացել էր մարդկանց կուտակում, եւ որոշ ընտրողներ գերադասում էին չքվեարկել, քան կանգնել ժամերով: «Իմանալով հանդերձ, որ քվեարկողներն այստեղ շատ են՝ նախօրոք պետք է մտածեին կուտակումները կանխելու մասին», ասաց ընտրողներից մեկը, իսկ մյուսն ասաց. «Կգամ երեկոյան, եթե արդեն ընտրած չեղան իմ փոխարեն, կընտրեմ, հիմա գնում եմ, իրենք էլ ու իրենց նախագահն էլ»: Եթե ընտրողն այսպես է արտահայտվում, ուրեմն չունի վստահություն ընտրությունների, թեկնածուների հանդեպ, իսկ ընտրատեղամաս ուզում է վերադառնալ, քանի որ քաղաքացիական պատասխանատվություն է զգում: Իսկ 4/27 տեղամասի հանձնաժողովի նախագահ Լոռա Ավագյանը բացառեց իր իսկ աչքի առջեւ ստեղծված կուտակումներն ու հեռացող ընտրողների վրդովմունքի իրավացիությունը:

4/29 եւ 5/27 տեղամասերում, բացի Սերժ Սարգսյանից, թեկնածուները չունեին վստահված անձինք, իսկ 4/27 ընտրատեղամասում ընդհանրապես չտեսա որեւէ մեկի վստահված անձին: Տեղամասի ներսում նրանց կարիքը թերեւս չկար էլ, քանի որ տեղամասերի շուրջը պտտվող, կանգնած ու պպզած թաղային հեղինակությունները կամ նրանց «երաշխավորած տղերքը» վստահված անձանցից էլ լավ գիտեին իրենց գործը, ինչի մասին վկայում էին, ճիշտ կամ սխալ, երեկ ընտրախախտումների մասին համացանցով անընդմեջ տարածվող լուրերը:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԹՈՒՐՔ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ

# Թուրքիայում մեծանում է հետաքրքրությունը հայաստանյան ընտրություններով

**Հայաստանյան ընտրությունները միջազգային առումով հետաքրքրություն ներկայացրել եւ ներկայացնում են առավելապես արդյունքների լեգիտիմության կամ հետընտրական գործընթացների առումով, քան բուն ընտրությունների: Միջազգային դիտորդների բազմահազարանոց ներկայությունը չի կարող վկայել ընտրությունների առնչությամբ հետաքրքրվածությունը, սակայն մասնացույց է անում դրանց հնարավոր խախտումները վերահսկելու կամ առնվազն դիտարկելու կարեւորությունը:**

**Ամեն դեպքում, որոշակի փոփոխություններ միջազգային ներկայության ու ընտրություններով հետաքրքրվելու առումով կարելի է գրանցել՝ թեկուզ հարեւան Թուրքիայի լրատվամիջոցների կողմից: Փետրվարի 16-ին Հայաստանի ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանն ընդունել է թուրքական հեղինակավոր լրատվամիջոցներ ներկայացնող առաջատար լրագրողների, որոնք Հայաստան են ժամանել «Հրանտ Դինք» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի շրջանակներում:**

**Պատասխանելով լրագրողների հարցերին՝ Էդվարդ Նալբանդյանը հանգամանալից ներկայացրել է Հայաստանի արտաքին քաղաքականությունը, մոտեցումները տարածաշրջանային եւ միջազգային կարեւոր խնդիրների վերաբերյալ:**

**Այդուհանդերձ, հետաքրքրական է, որ երբեւէ հայաստանյան իրադարձություններին առանց ցցուն առիթի չանդրադարձող թուրքական մամուլն արդեն երկրորդ անգամ լուսաբանում է Հայաստանում անցկացվող ընտրությունները՝ այս անգամ առավել մեծ ներկայացվածությամբ:**

**Հիշեցնենք, որ մի քանի թուրք լրագրողներ Հայաստան էին այցելել խորհրդարանական ընտրությունների ժամանակ, ընդ որում՝ առաջին անգամ լուսաբանելու հենց ընտրական գործընթացները:**

**Թե ինչու է թուրքական մամուլը հետաքրքրվում հայաստանյան իրադարձություններով՝ կարող է բազմաթիվ պատճառներ ունենալ, սակայն ակնհայտ է, որ Թուրքիայի քաղաքական օրակարգում վերջնամասային տեղ զբաղեցնող Հայաստանի պարագան փոփոխություններ է կրում: Դրական, թե բացասական՝ ժամանակը ցույց կտա:**

Վ. Պ.

# Հայաստանում 6-րդ անգամ նախագահ են ընտրում

*1-ին էջից*

Թեպետ Վարդան Սեդրակյանը մրսած էր, սակայն քվեարկություն կատարել է: Աջ ձեռքի սուր ցավը չի խանգարել, որ Պարույր Հայրիկյանը ընկերների օգնությամբ ընտրատեղամաս չայցելի: «Քվեաթերթիկում կարդացի իմ անուն-ազգանունն ու ինձ շատ հպարտ զգացի»: Մյուս երկու թեկնածուները՝ Անդրիաս Ղուկասյանն ու Արման Մելիքյանը չեն գնացել ընտրությունների: Ընտրություններին չի մասնակցել նաեւ ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանը: Առանց ընտանիքի՝ միայնակ, իր քաղաքացիական պարտքն է կատարել նաեւ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը: Նա հայտարարել է, որ ընտրություններից միշտ սպասելիք ունի, իսկ եթե օրենքը թույլ տար, յոթ թեկնածուի օգտին էլ կքվեարկեր:

Հիշեցնենք, որ առավոտյան ժամը 8-ին բացվել են հանրապետության 1988 ընտրատեղամասերը: Ընտրելու իրավունք ունի գրեթե 2,5 մլն քաղաքացի: Ընտրացուցակներում ընտրողների թիվը 2,5 մլն է: Առաջին փուլում հաղթելու համար թեկնածուները պետք է ստանան 50%+1 ձայն: Հակառակ դեպքում 2 շաբաթ անց տեղի կունենա ընտրությունների երկրորդ փուլը:

### Արձանագրված խախտումներ

Ընտրությունների ընթացքին զուգահեռ բազմաթիվ էին նաեւ ընտրախախտումների, ընտրակաշառքների բաժանման եւ լցոնումների վերաբերյալ ահազանգերը: Ընտրախախտումների մասին բազմաթիվ հաղորդումներ ոստիկանությանը ներկայացրել են Րաֆֆի Հովհաննիսյանի շտաբից: Օրինակ՝ Լոռու մարզի Կաթնառատ գյուղում 5000 դրամ ընտրակաշառք է բաժանվել: «Քաղաքացիներից մեկը հաղորդել է, որ իր տղան եւ ինքը արդեն 7 տարի դուրս են եկել հաշվառումից, բայց իրենց անունները կային ընտրացուցակում եւ իրենց փոխարեն արդեն ընտրել էին: Տաշիրում նույնպես արձանագրել ենք լցոնման փաստ, սակայն երբ մեր վստահված անձը՝ Մարիամ Պալուլցյանը, պահանջել է փաստն արձանագրել, հանձնաժողովը հրաժարվել է: Լոռու մարզի Քարաձոր գյուղի գյուղապետ Արայիկ Մատինյանը մտել է տեղամաս որպես Սերժ Սարգսյանի վստահված անձ: Լոռու մարզի Ճոճկան գյուղում գյուղապետը պարտադրում է բաց քվեարկել, նույն իրավիճակն է նաեւ Նորակերտում, իսկ Արբաթում քվեարկությունը տեղի է ունեցել առանց կնիքի», «**Ազգ**» օրաթերթի հետ հեռախոսազրույցում ասաց «Ժառանգություն» կուսակցության մամուլի խոսնակ Հովսեփ Խուրշուդյանը:

Խախտումների մասին ահազանգել է նաեւ «Թրանսփերենսի ինթերնեյշընըլ» հասարակական կազմակերպությունը: Արտաշատում գտնվող 17/05 ընտրատեղամասում շուրջ 500 քվեաթերթիկ է լցոնվել: «Հանձնաժողովի քարտուղարը, որը Հանրապետական կուսակցությունից էր, բացել է քվեատուփը, եւ տեղամաս մտած շուրջ 30 տղաները մոտ 500 քվեաթերթիկ լցրեցին քվեատուփի մեջ: Ոստիկանը թողեց նրանց ներս մտնեն, դիտորդներին հրեցին դեպի պատը, իմ գործընկերոջ ձեռքից կամերան վերցրեցին ու քվեաթերթիկները լցրեցին տուփի մեջ», ասաց դեպքի ականատես, կազմակերպության անդամ **Նարինե Էսմայելը**: Պարզվել է, որ Տաշիր քաղաքի բնակիչներին գյուղապետի գլխավորությամբ 25 կգ չափաբաժնով ալյուր եւ 10000-ական դրամ է բաժանվում: Այդ մասին դատախազության թեժ գծին զանգահարել է Տաշիրի բնակիչ Ս. Մարգարյանը: Իսկ Գեղարքունիքի Ճամբարակ քաղաքի թիվ 1, 2 եւ 3 դպրոցներում տեղակայված ընտրատեղամասերում մի խումբ քաղաքացիներ արձանագրել են, որ իրենց փոխարեն արդեն քվեարկել են: Երեւանի 17/2 ընտրատեղամասում էլ արձանագրվել է կնքված քվեաթերթիկների տրցակ առանձին սենյակում: Բազմաթիվ ահազանգերի համաձայն՝ Մալաթիա-Սեբաստիա համայնքում նույնպես գումար են վճարել: Այս տարածքի հետ կապված խախտումներն առնչվում են տեղի մեծամասնական պատգամավոր Սամվել Ալեքսանյանի հետ: Առավոտյան համացանցում լուսանկարներ տարածվեցին, համաձայն որոնց Ալեքսանյանին պատկանող Ախուրյանի շաքարի գործարանի աշխատողներին ավտոբուսներով բերում են քվեարկության: www.youtube.com կայքում տեղադրվեց տեսահոլովակ, թե ինչպես են Ավան համայնքի Թումանյան թաղամասում ավտոբուսի մեջ մի խումբ կանայք ցուցակները ձեռքներին ընտրակաշառք բաժանում:

Այս եւ բազմաթիվ այլ ահազանգերի ու ընտրախախտումների մասին հաղորդումներին Հանրապետական կուսակցությունից միայն մեկ արտահայտությամբ են արձագանքել: «Այդ ամենը բամբասանք է, հերյուրանք»:

**Հ. Գ.- Թեպետ Կենտրոնական ընտրական հանձնաժողովից հավաստիացնում էին, որ անձնագրում առկա կնիքի թանաքը պետք է ցնդի ոչ շուտ, քան 12 ժամվա ընթացքում, իրականությունն այլ բան էր փաստում: Մինչ ես ընտրատեղամասից հասա խմբագրություն, անձնագրիս կնիքը ցնդեց: Թեպետ ԿԸՀ նախագահ Տիգրան Մուկուչյանը հավաստիացնում էր, որ թաց անձեռոցիկով հնարավոր չէ կնիքը մաքրել, սակայն խմբագրությունում մեր աշխատակցուհիներից մեկը հակառակը փորձեց: Թաց անձեռոցիկը լավ էլ մաքրեց անձնագրում առկա կնիքը:**

# «Աղանդավորների դեմ մենք պայքարում ենք խոսքով»

## Ասում է Ավետարանչական ընկերակցության ներկայացուցիչը

***Ամերիկայի Հայ ավետարանչական ընկերակցությունը (ԱՀԱԸ) շուրջ 23 երկրներում օժանդակում է հայ համայնքներին: 1988 թվականից օժանդակում է նաեւ Հայաստանին, հետագայում՝ նաեւ Լեռնային Ղարաբաղին: Հայաստանում ընկերակցության ծրագրերի ու հեռանկարների շուրջը զրուցեցինք ընկերակցության Հայաստանի ներկայացուցիչ Հարութ Ներսեսյանի հետ:***


Հարութ Ներսեսյանը

**- Պարոն Ներսեսյան, Հայ ավետարանչական ընկերակցությունն ինչպիսի՞ գործունեություն է ծավալում Հայաստանում:**

- Անցյալ տարվանից կազմակերպության շեշտադրումն ավելի շատ երկու ոլորտների վրա է: Նախ ստեղծել աշխատատեղեր ու մարդուն օգնել, որպեսզի նյութական աջակցությունը ձեռք բերի իր աշխատանքով: Եվ երկրորդ շեշտադրումը կրթական ոլորտի վրա է, քանի որ երեխային ամենալավ պարգեւը, որը կարող ես տալ, իմ համոզմամբ, լավ կրթությունն ու դաստիարակությունն են:

**- Ի՞նչ է արվում աշխատատեղեր ստեղծելու ուղղությամբ:**

- Աշխատատեղերի ու եկամուտ ապահովելու ուղղությամբ անցյալում շատ ծրագրեր ենք ունեցել, սակայն նշեմ երկուսը, որոնք շատ ավելի ծավալուն են: Մեկը գյուղատնտեսական պիլոտային ծրագիր էր եւ իրականացվեց ամերիկյան «Հեյֆեր Փրոջեքթ Ինթերնեյշնլ» կազմակերպության հետ համագործակցությամբ: Այս ծրագրով մենք գյուղացուն տալիս ենք կով, տրամադրում նաեւ անասնաբուժական ու արհեստական բեղմնավորման ծառայություններ, սակայն պայմանով, որ կովից ծնված հորթը մեծացնելուց հետո գյուղացին պետք է փոխանցի մեկ այլ կարիքավոր ընտանիքի: «Հեյֆեր» կազմակերպության այս ծրագիրը, որը, ինչպես տեսանք, արդյունավետ է, լինելու է շարունական: Մեր ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ծրագրի շնորհիվ գյուղացիների եկամուտը 30-40 տոկոսով աճեց: Ծրագիրը սկսեցինք երկու տարի առաջ եւ արդեն օգնել ենք Լոռու, Տավուշի եւ Արագածոտնի մարզի շուրջ 150 գյուղացու:

**- Իսկ ինչպե՞ս եք ընտրում համայնքները, որտեղ իրականացնում եք ծրագրեր:**

- Համայնքներն ընտրում ենք «Հեյֆերի» հետ համագործակցելով, այդ համայնքներում մենք գրասենյակներ ու աշխատակազմ ունենք, որոնք հսկում են ծրագրի իրականացումը: Լինում են նաեւ դեպքեր, երբ համագործակցելու համար մենք դիմում ենք մարզպետարաններ, կամ մարզպետարանները են դիմում մեզ: Ընդհանրապես տարբեր ծրագրերով մենք համագործակցում ենք տեղական իշխանությունների հետ:

**- Ո՞րն է աշխատատեղերին առնչվող երկրորդ ծրագիրը:**

- Դա էլ նոր ավարտած շրջանավարտների համար էր, որոնք աշխատանք չեն գտնում: Ծրագիրն իրականացրինք ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (UNDP) հետ, եւ սա շրջանավարտներին աշխատանքային փորձի համար ապահովում է աշխատատեղերով: Ծրագրի համաձայն՝ սկզբում տրվում է հայտարարություն, ապա գործատուները ներկայացնում են դիմում, որ պրակտիկանտների կարիք ունեն, իսկ շրջանավարտները դիմում են որպես պրակտիկանտ աշխատելու համար: Ներկայումս շուրջ 60 երիտասարդներ ներառված են ծրագրում, եւ յուրաքանչյուրին իր աշխատանքի դիմաց ոչ աշխատավարձ, սակայն որոշակի քանակությամբ գումար տրվում է: Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ այդ փորձից հետո երիտասարդների 53 տոկոսը նույն տեղում մնում է աշխատանքի:

**- Իսկ ի՞նչ աշխատանքներ են տարվել կրթության ոլորտում:**

- Պատմականորեն ավետարանականները մեծ շեշտադրում են անում կրթության վրա: Օրինակ՝ Աղջկանց առաջին դպրոցը հայ ժողովրդի մեջ եղել է ավետարանական: Այն ժամանակ, երբ Արեւմտյան Հայաստանում ընդունված չէր, որ աղջիկները դպրոց գնային, դրան հայ ավետարանականները դեմ էին՝ ասելով, որ պետք է կիրթ լինեն նաեւ կանայք:


2012-ի ավարտական հանդեսը

Հայ ավետարանչական ընկերակցությունը, լինելով ավետարանական կազմակերպություն, նույնպես մեծապես կարեւորում է կրթությունը: Մենք համոզված ենք, որ հայ ազգի հաջողության ու ապագայի համար ամենակարեւոր գործոնը կրթությունն է: Այսօր ես ցավ եմ ապրում, որ Հայաստանում կրթության ոլորտը լուրջ խնդիրներ ունի թե՛ դպրոցական, թե՛ համալսարանական կրթության մեջ:

**- Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցությունը հիմնել ու ֆինանսավորում է Խորեն ու Շուշանիկ Ավետիսյանների անվան կրթահամալիրը, որի նոր շենքի հիմնարկեքին ասացիք, թե կրթահամալիրի դպրոցը Հայաստանում լինելու է լավագույնը: Կրթության որակի առումով ինչո՞վ է այն տարբերվելու մյուս դպրոցներից:**

- Նախ ասեմ, որ Ավետիսյան կրթահամալիր երեխաները հաճախում են 3 տարեկանից՝ սկզբում մանկապարտեզ, իսկ 6 տարեկանից տեղափոխվում են դպրոց: 2014 թվականից, երբ նոր շենքը պատրաստ կլինի, կունենանք նաեւ ավագ դպրոց: Եվ մեր դպրոցը պետք է լինի այնպիսին, որ 10-12-րդ դասարանների աշակերտները կարիք չունենան լրացուցիչ պարապելու համար իրենց տուն ուսուցիչ հրավիրելու: Մենք պետք է սովորեցնենք այն, ինչը նրանց պետք է համալսարան ընդունվելու համար: Մեր ուսուցիչները վճարվում են, հետեւաբար իրենք էլ պետք է սովորեցնեն: Իսկ աշակերտների համար դպրոցն անվճար է:

**- Բարձրագույն կրթությանն առնչվող ի՞նչ հեռանկարներ ունի ընկերակցությունը:**

- Անձամբ իմ նպատակն է, որ Հայաստանի ամերիկյան համալսարանի հետ համաձայնության գանք, որ մեր շրջանավարտները, եթե ցանկություն ունենան, դպրոցից հետո կրթությունը կարողանան շարունակել Հայաստանի ամերիկյան համալսարանում: Իհարկե, դրա համար եւս պետք է պատրաստենք մեր աշակերտներին՝ շեշտը դնելով նաեւ անգլերենի ուսուցման վրա:

**- Առողջապահական ու բարեգործական ուրիշ ինչպիսի՞ ծրագրեր ունեք Հայաստանում:**

- Ընկերակցության՝ Երեւանի, Վանաձորի ու Սպիտակի բուժկենտրոններում մատուցում ենք ատամնաբուժական ու մանկաբուժական ծառայություններ, կատարում ուլտրաձայնային ախտորոշում ու մանկական սննդի բաշխում: Ու բոլոր այս ծառայությունները մատուցվում են անվճար:

**- Եվ ի՞նչ սկզբունքով են արվում բարեգործությունները:**

- Հայ ավետարանչական ընկերակցությունը ավետարանական, քրիստոնյա կազմակերպություն է, եւ մենք հավատում ենք, որ Աստված մեզ կանչել է մեր հնարավորության սահմաններում կարիքավորին օգնության ձեռք մեկնելու համար:

**- Ներկայումս Հայաստանում կան քրիստոնեական սկզբունքներից շեղումներ ունեցող աղանդավորական տարբեր կազմակերպություններ: Ի՞նչ վերաբերմունք ունի Ձեր կազմակերպությունը դրանց հանդեպ, եւ ԱՀԱԸ-ն արդյոք պայքարո՞ւմ է դրանց դեմ:**

- Աղանդավորների դեմ մենք պայքարում ենք խոսքով: Եհովայի վկաների ու մորմոնների մասին մի բրոշյուր տպագրել ենք, հիմա էլ ընդդեմ Եհովայի վկաների տպագրում ենք մի գիրք, որը տպարանում է: Ե՛վ մորմոնների, ե՛ւ Եհովայի վկաների աստվածաբանությունը շեղված է, սխալ է նրանց աստվածաբանական վարդապետությունը, ու նրանց դեմ պետք է պայքարել խոսքով: Սովորաբար նրանք, ովքեր մտնում են աղանդներին, ունեն հոգեւոր կարիքներ, որոնք բավարարված չեն, ու աղանդների դեմ պայքարելու լավագույն ձեւը եկեղեցու կողմից ժողովրդի հոգեւոր կարիքները հոգալն է:

Հարցազրույցը վարեց
ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆԸ

# ՀՀ նախագահական ընտրություններին արձագանքում է թուրքական մամուլը

## Թեկնածուներից Րաֆֆի Հովհաննիսյանն ու Պարույր Հայրիկյանը հայտարարություններ են անում «Հյուրիեթին»

Փետրվարի 9-ի համարում «**Ազգը**» նախագահական ընտրությունների թուրքական արձագանքներին անդրադառնալիս, ընթերցողի ուշադրությանն էր ներկայացրել «Դունյա բյուլթենի» կայքէջի «2013-ը Կովկասի համար կդառնա՞ վերափոխման տարի» վերնագրով անստորագիր հոդվածը: Թուրքական կայքէջում դեռեւս հունվարի 30-ին հրապարակված հոդվածը կարծիք էր հայտնում, թե վերջին ամիսներին Վրաստանում տեղի ունեցած քաղաքական զարգացումները մեծացրել են հարավկովկասյան հանրապետություններում ակնկալվող մեծ վերափոխումների հավանականությունը, ուստի «որքան էլ նախագահ Սերժ Սարգսյանը վայելի Կրեմլի աջակցությունը, ակնհայտ է Սաակաշվիլու տարբերակը Հայաստանում կիրառելու արեւմտյան տերությունների մտադրությունը»:

«Դունյա բյուլթենի» կայքէջի խմբագրականի բնույթ կրող հոդվածը չէր մանրամասնել այդ մտադրությունները, ոչ էլ նշել է դրանց նկատմամբ թուրքական շրջանակներում տիրող մոտեցումների մասին: Այդուհանդերձ, նույն կայքէջը փետրվարի 17-ին «Նախընտրական լռություն» խորագրով հրապարակել է մեկ այլ հոդված, որտեղ, ՀՀ գործող նախագահի խոսքերով, պարզաբանում է «Արեւմտյան տերությունների վերոհիշյալ մտադրությունը»:

Ահա թե ինչ է գրել թուրքական կայքէջը. «Ընտրությունների նախօրյակին քարոզարշավի վերջին օրը հեռուստաէկրանից ժողովրդին դիմեց նախագահ Սերժ Սարգսյանը եւ շեշտը դնելով Հայաստանի Սահմանադրության վրա, ասաց. «Մեր Սահմանադրությամբ արգելվում է ուժի միջոցով իշխանության բռնազավթումը: Այդ իսկ պատճառով վերջին տարիներին հաճախակի շրջանառվող «հեղափոխություն» հասկացությունը Հայաստանում ենթադրում է ոչ թե իշխանափոխություն, այլ՝ սահմանադրական բարեփոխումներ»: Սարգսյանի գլխավոր մրցակիցը՝ նախկին արտգործնախարար, «Ժառանգություն» կուսակցության առաջնորդ Րաֆֆի Հովհաննիսյանն է, «Ազգային ինքնորոշում միավորման» նախագահ Պարույր Հայրիկյանը, որն օրակարգ մտավ մահափորձի հետեւանքով, կարծիք հայտնեց, թե Սարգսյանը կպարտվի, եթե ընդդիմադիր թեկնածուները միավորվեն, իսկ Անդրիաս Ղուկասյանը հաղորդագրությամբ Սարգսյանին մեղադրեց ընտրողներին կաշառելու մեջ»:

Այդ կայքէջը ՀՀ նախագահական ընտրություններին անդրադարձել էր նաեւ փետրվարի 18-ին, սակայն առանց մեկնաբանության ամփոփել է Հայաստանում տիրող նախընտրական վիճակը: Նույն օրը ընտրություններին արձագանքելիս, «Հյուրիեթը» ներկայացրել է սեփական թղթակցի հանդիպումը նախագահի թեկնածուներից Րաֆֆի Հովհաննիսյանի եւ Պարույր Հայրիկյանի հետ:

Թուրքական թերթի վկայությամբ՝ պրն Հովհաննիսյանը նախընտրական կենտրոնական շտաբում ընդունել է լրագրողներին, առանձնակի ուշադրություն է ցուցաբերել «Հյուրիեթի» թղթակցին եւ գրկախառնվել է, բացականչելով. «Ո՞վ է ասել, որ մենք թշնամիներ ենք: Դուք իմ եղբայրն եք»: Այնուհետեւ Րաֆֆի Հովհաննիսյանն ասել է, որ նախընտրական ծրագրում ինքը թեեւ մեծ տեղ չի հատկացրել Թուրքիայի հետ հարաբերություններին, սակայն ընտրվելու դեպքում լրջորեն կզբաղվի այդ հարցով, եթե անհրաժեշտություն լինի, վերստին կանդրադառնա արձանագրությունների գործընթացին»:

«Հյուրիեթի» թղթակցին ընդունել է նաեւ Պարույր Հայրիկյանը: Ընդունելության առնչությամբ թուրքական թերթը գրում է. «Թուրքիային ջերմ խոսքեր հասցեագրող երկրորդ թեկնածուն մահափորձից փրկված Պարույր Հայրիկյանն է: Նա ասաց. «Կարծում եմ, մահափորձը նախաձեռնել են այն ուժերը, որոնք չեն ցանկանում Հայաստանի հետ Թուրքիայի մերձեցումը: Հայաստանի ուղին անցնում է եվրոպական քաղաքակրթության արժեքներով: Այդ ճանապարհով ընթանալու համար Հայաստանը պետք է բարելավի հարաբերությունները Թուրքիայի հետ»: Հայրիկյանը անդրադարձավ նաեւ 1915-ի իրադարձություններին: «Այս հարցում չի կարող լինել միայն թուրք ժողովրդին դատապարտող մեկ համոզմունք: Վատերի կողքին կան նաեւ լավ թուրքեր: Կարծում եմ, մեր օրերի Թուրքիայում լավ թուրքերը մեծամասնություն են կազմում», ասաց նա»:

Հ. ՉԱՔՐՅԱՆ

## Միջազգային

**ԽԱՌՆԱԿ ՕՐԵՐ ՀԱԼԵՊԻ ՄԷՋ**

# Մեր կրթարանները

Հալէ՜պ, Հալէ՛պ: Զինարձակումները կը շարունակուին: Ռումբերու որոտները ցնցում կը պատճառեն ժողովուրդին, յատկապէս երեխաներուն: Սակայն երբ դուրս կու գաս բնակարանէդ կը տեսնես թէ մայթերը լեցուն են բազմութեամբ: Ինչպէ՞ս փակուած մնան վանդակի մէջ:

Կեանքը կը շարունակուի:

Հալէպի հայկական հինգ երկրորդական վարժարաններու՝ Քարէն Եփփէ ազգային ճեմարանի, Կիլիկեան վարժարանի, Կրթասիրացի, Հայ Աւետարանական Բեթէլի եւ ՀԲԸՄիութեան Լազար Նաճարեան-Գալուստ Կիւլպենկեան վարժարանի դռները բաց են:

Ոմանց կայքը փոխուած է, դասաւանդութեան համար այլ տեղ ընտրած են, ըստ յարմարութեան:

Ահա կը մտնեմ այս ճեմարանի մանկապարտէզի բաժինը, նոյեմբերի 6-ին: Բողբոջ դասարանի մինինիկներէն յիսուն հոգի ներկայ են, ոմանք իրենց ծնողներուն հետ եկած են: Կը լուսանկարուինք խումբի մը հետ:

Կը շնորհաւորեմ այն ծնողները, որոնք երբ պատերազմական այս իրավիճակին մէջ անվտանգ անկիւն մը իսկ չկայ, իրենց զաւակները վստահած են այս վարժարանին:

Կը դիտեմ երեխաներուն վազվզուքը, իրարու հետ իյնալ-ելլելը, գործիքներն ի վեր ելլելն ու սահիլը... կը լսեմ ճիչերը, աղաղակները... Ամիսներէ ի վեր կարծէք բանտարկուած ըլլային, նոր շունչ մը կ՛առնեն, կը ցատկրտեն, կ՛աղմկեն.. Օ՜, երեխաներու հանած այդ աղմուկը, նոր երաժշտութիւն մըն է կարծէք...

Նախակրթարանի մասնաշէնքին մէջ եւս աշխուժութիւն մը կայ: Հոս աշակերտներուն թիւը 157-հասած է: Հոս եւս ծնողներու բազմութիւն մը կայ: Քաղաքին հեռու շրջաններէն ծնողներ կը փորձեն իրենց զաւակները արձանագրել տալ այսպիսի տարեշրջանի մը երբ դիպուկահարներ իրենց մարդասպանի դերը կը շարունակեն կատարել:

Բայց ահա հակառակ այս իրողութեան, միջնակարգի աշակերտներուն թիւը հասած է 135-ի: Բարձրագոյն դասարաններու աշակերտներու թիւն ալ 140-ի:

Ուրեմն ՀԲԸՄիութեան այս վարժարանը 2012-2013 տարեշրջանի համար ունի 500-ի մօտ աշակերտութիւն եւ դեռ օրէ օր կ՛աւելնայ աշակերտներուն թիւը: Մեղուի փեթակ մըն է դպրոցը, այս հայ դպրոցը, որ խաղաղ պայմաններուն իր գիրկին մէջ կ՛ունենար 1200-է աւելի աշակերտ-աշակերտուհի:

Պատերազմական պայմաններուն աշակերտութեան այս թիւը դպրոցին համար մխիթարական կը նկատեմ:

Դպրոցին աշակերտները առաւելաբար մօտիկ շրջապատէն եկողներ են: Հեռաւոր ու սահմանային շրջաններու աշակերտները բացակայ են: Վախը համատարած է:

Բայց խօսուն թիւերը մեզի կ՛ըսեն, թէ կեանքը կը շարունակուի:

Դպրոցէն մէկ քայլ անդին ՀԲԸՄ-ի բարձրայարկ շէնքն է:

Հոս շուրջ քառասուն միութենականներ աշխատանքի լծուած են ու պատրաստած խաւաքարտէ մեծկակ տուփեր, նուիրաբաշխումը կրկնելու համար:

Երկու ամիս առաջ 2500 ընտանիքի օգնութեան հասած էին:

Այս անգամ դարձեալ նոյն 2500 ընտանիքներուն պիտի բաշխուին պատրաստուած տուփերը, զորս պիտի հասցնեն մինչեւ նպաստընկալներուն տուները, միութեան օթոմիւերով:

Պատրաստող տղոց՝ աղջիկ ու մանչ, քաջալերական երկու խօսք կ՛ուղղեմ գնահատելով իրենց աշխատանքը:

Պատերազմը սուլող իր փամփուշտներով, որոտացող ռումբերով կը շարունակուի իր կեանք ու շէնքեր փլատակող ընթացքով եւ անոր քովն ի վեր շարունակուող կեանքով:

Մեր բոլոր կրթարաններու դռները բաց են, թող բաց մնան:

# Պատերազմը պիտի պարտուի՛

Եագուպիէն հիւսիսային Սուրիոյ մէջ հնամէնի գիւղ մըն է հայ ազգաբնակչութեամբ: Գիւղը ունի հայկական զոյգ եկեղեցի եւ հայկական դպրոց, որ կը վայելէ ՀԲԸՄիութեան եւ Հալէպի ազգային առաջնորդարանին օժանդակութիւնը:

Ժամանակի ընթացքին այս գիւղին մէկ մասը լատինացած է:

Անոր բնակչութեան լատինացած անդամներէն մէկուն հարց տուի.- Ազգութեամբ ի՞նչ ես.

Պատասխանեց.- Էնէ լաթին:

- Լատինութիւնը կրօնք է,- ըսի.- Ազգութիւնդ կը հարցնեմ:

- Անունս Անժէլ է.- ըսաւ.- Հայրս հայերէն կը խօսէր, ես հայերէն չեմ գիտեր, ես լաթին եմ:

Հարցը որ կողմէն ալ շրջեցի, պատասխանը եղաւ նոյնը՝ «Ես լաթին եմ...»

Եագուպիէյի ծնունդ էր նաեւ Սմբատ Քասսիս Երէցեանը: Այս Սմբատն ալ հայերէն խօսիլ չէր գիտեր, բայց հայ էր իր ողջ էութեամբ: Բազմազաւակ էր: Ան իր զաւակները ղրկեց, որ սորվին մայրենի լեզուն ու մեծնան որպէս հայ:

Այս զաւակներէն մէկը՝ Աբրահամ Երէցեան, յաճախեց Ազգային Հայկազեան վարժարան ու ոչ միայն սորվեցաւ իր մայրենի լեզուն, այլ գիրք գրեց իր ծննդավայր Եագուպիէ գիւղին մասին: Աւելին, մեկնեցաւ Ֆրանսա, դարձաւ բժիշկ ու այս երկրին ծառայեց ամբողջ իր կեանքին ընթացքին ու այսօր եւս հակառակ իր շալկած տարիներուն կը շարունակէ ծառայել իր ծնած երկրին:

Բժիշկը բազմազաւակ էր: Ան իր բոլոր զաւակները ղրկեց Հայաստան, նաեւ իր հայրենակիցներէն շատերը, որոնք Երեւանի մէջ բարձրագոյն ուսումի տիրացան ուժ ամբարելով հայրենի հողէն:

Բժիշկին աւագ որդին իր մեծ հօր անունով կոչուեցաւ Սմբատ:

Սմբատը, որ վարպետ շախմատ խաղցող մըն է, այլ հետաքրքրութիւններու կարգին՝ դերասան դարձաւ Հալէպի մէջ, Երեւանէն վերադառնալով որպէս ատամնաբոյժ:

Ահա իր մօտն եմ, իր ատամնաբուժարանին մէջ: Օրը ուրբաթ է: Ուրբաթը պաշտօնապէս Հալէպի մէջ աշխատանքային օր չէ ու պատերազմի պատճառաւ վախազդու օր է, քանի կրնան անախորժութիւններ պատահիլ ուրբաթի աղօթքին մասնակցող անձերէ մզկիթէն ելլելէն ետք:

Ատամնաբոյժ Սմբատ Երէցեանը կը պատմէ.- Քիչ առաջ դարմանատունս եկաւ հիւանդ մը, որ որպէս կանխավճար ինծի յանձնած էր կլոր գումար մը իր ատամներուն բուժումին համար: Նախապէս ժամադրուած էր: Քառասուն օրերու բացակայութենէ մը ետք, քիչ առաջ եկած էր յայտնելու, որ պիտի յետաձգէր իր ատամները բուժել տալու անհրաժեշտ գործը:

Ըսաւ՝ անգործ եմ, տանս մէջ ուտելիք չմնաց, կ՛ամչնամ ըսելու, բժիշկ, որ տուած կանխավճարս վերադարձնելդ պիտի պիտի խնդրեմ, եթէ կարելի է...

Հասկցայ մարդուն կացութիւնը:

Վերադարձուցի կանխավճարը...

Պատերազմի օրեր են...

Պատերա՞զմը պիտի յաղթէ Հալէպը, թէ՞ Հալէպը պատերազմը:

Անշուշտ պատերազմը պիտի պարտուի՛:

**ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ**
**Հալէպ**

# Ութ տարում ներգաղթյալների կարգավիճակի օրինականացման հնարավորություն ԱՄՆ-ում

Նախագահ Բարաք Օբամայի վարչակազմը մշակել է օրինագիծ, որն անօրինական ներգաղթյալներին հնարավորություն է տալիս 8 տարում ստանալու օրինական կարգավիճակ, եթե նրանք սովորեն լեզուն եւ կատարեն մի շարք այլ պահանջներ: Սպիտակ տան պաշտոնյաներից մեկը իր անունը չհրապարակելու պայմանով փաստաթղթի սեւագիրը փոխանցել է USA Today թերթին:

Օրինագիծը ընդհատակյա ներգաղթյալներին նաեւ թույլ կտա հայցել «Ապագա օրինական ներգաղթյալ» տիպի մուտքի արտոնագիր եւ առավել մատչելի կդարձնի ապահովագրական հիմնադրամը: Օրինական կարգավիճակի կարող են հավակնել ոչ միայն եկվորները, այլեւ նրանց կողակիցները եւ զավակները:

Մուտքի նոր տիպի արտոնագիր ստանալու համար ներգաղթյալները չպետք է ունենան քրեական անցյալ, պարտավոր են ներկայացնել կենսաչափական տվյալներ եւ տույժ վճարել: Արտոնագիրն իրավունք է տալիս ԱՄՆ-ում ապրել եւ աշխատակցել 4 տարի եւ հեռանալ կարճ ժամկետով, որից հետո կարելի է կրկին ներկայացնել փաստաթղթերը եւ երկարաձգել արտոնագիրը:

Օրինագծի համաձայն՝ քառամյա արտոնագրի կարող են հավակնել նաեւ իրենց արտաքսմանը սպասող ներգաղթյալները, եթե չեն դատապարտվել 1 հանցանքի համար 1 տարվա կամ ավելի երկարատեւ բանտարկության կամ 3 տարբեր հանցանքների համար ընդամենը 90 օրվա կամ ավելի երկարատեւ բանտարկության, կամ էլ արտերկրում գործել են այնպիսի հանցանք, որն ԱՄՆ-ում կպատժվեր արտաքսմամբ:

Ութ տարի անց ներգաղթյալները կարող են գրինքարտի հայց ներկայացնել, իսկ դրանից հետո հավակնել ԱՄՆ քաղաքացիության:

**USA TODAY**

# ԱՄՆ զինավաճառներն այլեւս անկարող են բավարարել պահանջարկը



**Զինատեսակների աննախադեպ պահանջարկի պատճառով ամերիկյան խանութներում արդեն զենքի պակաս է զգացվում: Հրազենի տարածման սահմանափակումներից վախենալով՝ ամերիկացիները սկսել են զանգվածաբար համալրել իրենց զենքի պաշարները, հաղորդում է USA Today թերթը: Արդեն դժվարացել է լայնորեն տարածված զինամթերքների ձեռքբերումը, որոնցից են 22 տրամաչափի փամփուշտները:**

**Բացի դրանից, վերջին մեկ տարում զենքի որոշ խանութներում զինատեսակների գները կրկնապատկվել են: Երբեմն զինավաճառները սահմանափակում են մեկ գնորդին վաճառվելիք ապրանքների քանակը:**

**Հրազենային սպորտի ազգային հիմնադրամը զենքի ներկայիս մեծ պահանջարկը բացատրում է մարզական հրաձգության, որսորդության ժողովրդականության աճով, ինչպես նաեւ ինքնապաշտպանական զենքի անհրաժեշտությամբ: Մինչդեռ զինավաճառները պնդում են, որ խանութներում ռեկորդային պահանջարկն ապահովում են ոչ թե մարզիկները, այլ զենքի սեփականատերերը, որոնք համալրում են իրենց պաշարները, վախենալով արգելքներից կամ հարկերի բարձրացումից:**

**Նշվում է, որ վաճառքի ծավալները կտրուկ աճեցին նախագահ Բարաք Օբամայի վերընտրությունից հետո, որի վարչակազմը դեմ է զենքի լայն տարածմանը, իսկ այս տարվա աննախադեպ պահանջարկը կապված է զինավաճառքի սահմանափակմանն առնչվող հանրային քննարկումների հետ:**

**2012 թ. դեկտեմբերի 14-ին «Սենդի Հուկ» տարրական դպրոցում (Կոնեկտիկուտի նահանգ) 20-ամյա Ադամ Լենզան հրազենով սպանեց 27 մարդու, այդ թվում՝ 20 երեխայի: Այդ կապակցությամբ 2013-ի հունվարին Օբաման հանդես եկավ զենքի ազատ վաճառքը սահմանափակելու առաջարկություններով, մասնավորապես առաջարկվում է արգելել գրոհային զենքի եւ բազմալիցք պահունակների վաճառքը մասնավոր անձանց, խստացնել պասիվը զենքի անօրինական վաճառքի համար եւ առհասարակ սահմանել հրազենի վաճառքի նոր արարողակարգ:**

**Օբամայի նախաձեռնությունները հարուցեցին զենքի սեփականատերերի եւ Ազգային հրաձգային ընկերակցության ներկայացուցիչների դժգոհությունը: Նրանց կարծիքով՝ նախաձեռնությունները կվերաբերեն միայն օրինապահ քաղաքացիներին եւ բնավ էլ չեն պաշտպանի բնակչությանը անհիմն բռնարարքներից:**

**Պ. Ք.**

# Էկվադորի նախագահը վերընտրվել է



**Էկվադորում կիրակի օրն անցկացված նախագահական ընտրությունները ավարտվել են գործող նախագահ Ռաֆայել Կոռեայի հաղթանակով, հաղորդում է Ֆրանսպրեսը: Քվեարկության նախնական արդյունքների համաձայն՝ ձախամետ նախագահը ստացել է մոտ 60 տոկոսը: Նրա գլխավոր մրցակից Գիյերմո Լասսոն ստացել է մոտ 40 տոկոս:**

**Ռաֆայել Կոռեան Էկվադորի նախագահի պաշտոնն զբաղեցնում է 2007 թվականից: Էկվադորցիների մոտ 30 տոկոսն ապրում է աղքատության մեջ: Նախագահը երկրում ժողովրդականություն է վայելում իր սոցիալական ծրագրերի շնորհիվ: Կոռեայի քաղաքական ուղեգծի համաձայն՝ նախատեսվում է Վենեսուելայի օրինակով Էկվադորում հաստատել նախագահական ուժեղ իշխանություն:**

**2003 թվականին Էկվադորում ընդունվեց նոր սահմանադրություն, որը Կոռեան անվանում է «սոցիալիստական»: Սահմանադրությունը զգալիորեն ընդլայնեց նախագահի լիազորությունները, ինչպես նաեւ երկրորդ ժամկետով ընտրվելու հնարավորություն տվեց պետության ղեկավարին:**

ԱԶԳ

## Մշակույթ

Հատորը, որ անցած տարվա կեսերին Ստամբուլից ստացանք, մի նոր «վկայական» է մեզ ծանոթ ու անծանոթ Զահրատ բանաստեղծ-մարդու մասին: Գիրքը որպես խորագիր կրում է իրեն թերեւս ամենաբնորոշ տողերից-մտքերից մեկը՝ «Եկեր եմ կ՛երթամ այսպէս որու ինչ»:

Ի՞նչ է բանաստեղծությունը, եթե ոչ կյանքի մեկնաբանության ձեւ, աշխարհը ես-ի միջոցով անցկացված փորձառության փոխանցում, եթե չկա դա, ենթագիտակցական սուր ակտիվություն կամ զգայական խաբկանք եւ կամ ներքնատեսության պայծառացման պահ եւ այլն, եւ այլն: Անհատական զգացողությունների հեղման ազդեցության տեւականությունը ապրումի խորքի, անկեղծության եւ գեղարվեստականության աստիճանն է պահանջվում: Այլապես աշխարհի պարզ սոսկական վերարտադրությունը (իմա՝ նկարագրությունը), որքան էլ՝ դրանց քնարական զեղումնայնության կամ զարդարվածության եւ կամ ներկայումս տարածված կյանքի նատուրալ-գռեհկաբանված չափածոյացման, ժամանցային են, այսօր արդեն ժամանակավրեպ (որովհետեւ այդպիսի բաները կարճ են ապրում):

# Մեզ ծանոթ-անծանոթ Զահրատը




Զահրատը ամենաարդիական բանաստեղծներից է՝ իր մտածողությամբ եւ բանաստեղծական ձեւի (կաղապարի) մատուցմամբ: Նրա բառերի ձուլվածքը այնպիսի ամուր կոմպոզիցիա է ստեղծում, որտեղ որեւէ՝ անգամ չնչին միջամտություն անհնար է կատարել. ամեն բան ասված է հստակ, հստակ, երբեմն խիստ, թվում է չոր, որովհետեւ բոլորովին անզեղազարդ է, անսեթեւեթ: Սա իր բանաստեղծական արվեստի հիմքն է, ատաղձը, գեղարվեստական մտածողության արմատը, որի վրա բարձրանում-տարածվում է խոսքի ծառը՝ հասուն-իրական ու երազային. առտնին-առօրյական է նյութը, խոհափիլիսոփայական, թե՞ սիրային՝ միեւնույն է: Իր բանաստեղծության մեջ բառերն իրար հետ խաղի մեջ են՝ ստեղծելով զգացմունքի-խոհի փոխանցիկ վիճակներ, բառերի «խաղը» բանաստեղծությանը հաղորդում է մի տեսակ շարժունություն, աշխուժություն, ասես թռչում-թռչկոտում են նրանք, եւ չափածո «տարածքում» կյանքի մանրակերտն է հյուսվում՝ մարդու ապրածի՝ սիրո, ուրախության, արցունքի, սպասումի, հույսի ու անհուսության, խաբկանքի եւ ունայնության, կորստի, չգոյության, մահվան: Մանրակերտ այդ կառույցը ժամանակակից ոճ, ռիթմ ու տեմպ ունի՝ այսօրեական է, նաեւ թվում է պրագմատիկ, որովհետեւ փոքր, աննշան երեւույթներն ու մարդիկ շատ են: Սակայն անսեթեւեթ, անպաճույճ բառը եւ կառույցը խորքում կրում են բանաստեղծական ես-ի տարաշերտ ու տարընթեռնելի այն աշխարհը, որտեղ նա արտաքին ազդակներից զերծ իր ներքին իրականության մեջ ինքնամերձ, ինքնահաստատ ու ինքնաբավ է՝ այսինքն՝ «Եկեր եմ կ՛երթամ այսպէս որու ինչ»:

Իր «Պտոյտ մը հայ բանաստեղծութեան պարտէզին մէջ» շարքի Զահրատին նվիրված գրությունը Ռոբեր Հատտեճյանը խորագրել է «Երազն ու պարը Զահրատի աշխարհին մէջ»: Շատ մանրամասն, կարելի է ասել անատոմիական վերլուծության ենթարկելով Զահրատի բառի գեղարվեստական աշխարհը՝ նա գրում է. «Զահրատ իսկական պոետ մըն է, եթէ ոչ կեանքի մէջ, անպայման բանաստեղծութեան մէջ: Ան կը շրջի սրտէ սիրտ, սէրէ սէր, երգէ երգ, լարէ լար եւ ձեռք կու տայ բոլոր անոնց, որոնք գիտեն կեանքի իրականութիւններուն նայիլ երազի մը ընդմէջէն:

«Այս ոստումները, որոնք կը կատարուին մէկ զգացումէ դէպի միւսը, մէկ մտածումէ դէպի միւսը, մէկ սէրէ դէպի միւսը, իրականութեան մէջ ոստումներ են մէկ բառէն դէպի միւսը: Զահրատ բառ գործածելու վարպետ մըն է: Ան իսկապէս մեծ վարպետութեամբ իր մօտ կը կանչէ հայոց լեզուի բառերը: Բայց բառերն ալ զուարթօրէն կը վազեն բանաստեղծին օժանդակութեան»: Զահրատի բանաստեղծության ավիշը հայոց լեզուն է, ակունքը՝ հայ մշակույթն ու պատմությունը, ոգին՝ կյանքը, իր ապրածն ու զգացածը՝ շիտակ, անզարդ-ազդու: Ահա մեկ-երկու նմուշ, թե ինչպես Զահրատը կարող է պատմել սիրո, կյանքի, մարդկային մանր ու մեծ հոգսերի, ճակատագրերի, մարդու եւ միջավայրի զգացողական վիճակների մասին՝

**Սիրո հուսախաբություն-խաբկանք՝**

*...Հեռուէն տեսայ, որ դուն կու գայիր*
*Ոստոստուն ուրախ*
*Սակայն ճամբուն հետ փոխուեցար դուն ալ*
*ու այն որ ինծի հասաւ դուն չէիր*
*Ու այն որ ինծի հասաւ թախիծն էր*
*Վիշտն էր մօրէ մերկ*
*Հեռուէն տեսայ, որ դուն կու լայիր...*

**Կյանքային պարադոքսներ՝**

*Խոհեմ մարդ էր*
*չծնաւ*
*ոչ անուն ունեցաւ ոչ տանիք*
*ոչ ալ կեանքին հետ*
*առնելիք տալիք:*

***Կամ՝***

*...Երեկ գիշեր երկար խորհեցայ*
*ու որոշեցի չմեռնիլ տակաւին*
*Որովհետեւ*
*Վաթսունը գրեթէ կէսն է կեանքին*
*ու որովհետեւ աշխարհ,*
*պիտի շատ գեղեցիկ ըլլայ յիսուն տարի վերջ*
*...Յետոյ մէկը պիտի ըսէ ինծի*
*թէ հարյուր տասը տարին ալ չի բաւեր*
*պատշաճօրէն*
*կուշտ ու կուռ մեռնելու համար:*

**Պարույր Սեւակի մահվան առիթով՝**

*Պարոյր մանչս քանի որ*
*Նոյն տարիքը ունէինք-*
*Մանուկ էինք երկուքս ալ-*
*Խաղը կիսատ թողուցիր-*
*Չեղաւ ասիկա:*

**Մարդկային բթացած զգացողությունների զահրատյան տխրությունը՝**

*Չորս ոչխար էին*
*Նախ առաջինը մորթեցին*
*յետոյ երբ երկրորդը կը մորթէին*
*երրորդը փորձեց փախչիլ*
*Հազիւ տասը մեթր գնաց*
*ձերբակալեցին*
*Ես այդ երրորդին միսէն կերայ-*
*Կեանքի համ ունէր:*

Այստեղ կանգ առնենք Զահրատի բանաստեղծական գայթակղությունների առաջ, որովհետեւ ժողովածուն, որը փորձում ենք ներկայացնել Զահրատի ու նրա գրականության մասին է՝ այսինքն բովանդակում է գրականագիտական հոդվածներ, հարցազրույցներ, նամակներ, եւ վերջում բանաստեղծին ուղղված նվիրումներ՝ արվեստի լեզվով (ձոներ, դիմանկարներ, շարժեր):

Գիրքը լույս է տեսել Ստամբուլում (տպագրությունը՝ «Ժամանակ» օրաթերթի), կազմել է բանաստեղծի այրին՝ Անայիս Յալտըզճյանը, խմբագիրն է Սեւան Տեյիրմենճյանը (շապիկը՝ Քրիստին Սալերիի): Առաջաբան-երկու խոսքում Անայիս Յալտըզճյանը ներկայացնում է ժողովածուի տպագրության նպատակը՝ «Ընթերցողին իմացական աշխարհին մէջ ստեղծելու պատկերը այն ժամանակուան պոլսահայ գրական ու մշակութային մթնոլորտին» եւ իհարկե՝ փրկել Զահրատի գրական ժառանգության կարեւորագույն մեկ մասը՝ հնարավորինս ընդգրկելով այն անձանց ու դեմքերը, որոնք ուղղակիորեն կապ են ունեցել Զահրատի գրական կյանքի հետ: Խմբագրի խոսքում Սեւան Տեյիրմենճյանը անդրադառնում է ժողովածուի կազմման՝ նյութերի հավաքման, ընտրության, համակարգման աշխատանքներին, գրելով որ դա ոչ միայն հարգանք է գրողի վաստակի հանդեպ, այլեւ՝ ընկերոջ, բարեկամի նկատմամբ սիրո արտահայտություն: «Կեանքը ծով մըն է եթէ, նաւակ մը, «Զահրատ» անուն, հետք ու հիշատակ թողլով անցաւ հոնկէ...»:

Ահավասիկ այս հետք ու հիշատակի գնահատում-վերաբերմունքն է, որ ժողոված է այս գրքում՝ Սփյուռքի եւ Հայաստանի մտավորականների, գրողների, լրագրողների, նաեւ օտարների գրչով արձանագրված: Սա իր պատմությունն է, իր ժամանակակցի խոսքը իր եւ իր գրականության մասին:



401 էջից բաղկացած ժողովածուի շուրջ երեք տասնյակ հեղինակների գրություններին անդրադառնալ մեկ հոդվածի շրջանակներում հնարավոր չէ, առանձնացնելն էլ հարմար չենք նկատում, որովհետեւ թե գրականագիտական վերլուծությունները, թե դիմանկարակնարկները, թե ուղերձները արժեքավոր հեղինակների գրություններ են՝ նրանց մեջ Հակոբ Մնձուրի, Ռոբեր Հատտեճյան, Վահե Օշական, Երվանդ Ազատյան, Իգնա Սարըասլան, Հրանտ Մաթեւոսյան, Գրիգոր Շահինյան, Մարկ Նշանյան, Մինաս Թեոլեոլյան, Վահագն Դավթյան, Ալեքսանդր Թոփչյան, Արփի Թոթոյան եւ այլք: Զահրատի մարդկային նկարագիր-դիմանկարն են ուրվագծում նաեւ հարցազրույցները հայր Լեւոն Զեքիյանի, Հակոբ Վարդիվառյանի, Արա Գոչունյանի, Անահիտ Ադամյանի եւ ուրիշների հետ: Նմանապես նամակները ամբողջացնում են բանաստեղծի կերպարը: Գրականագիտական վերլուծությունները զահրատյան բառի (բանաստեղծության) արժեքի, կշռույթի անհատական «ստուգաբանումներ» են, որտեղ անհնար է չտեսնել պատկերաստեղծման եզակիություն, նրա ներքին աշխարհի ինքնորինակություն, բանաստեղծական կառույցի անշփոթելի տիպ, անպայման հումորն ու հեգնանքի թախիծ, իհարկե՝ նորարարական շունչ՝ հատկապես վերջաբանային զահրատյան անակնկալներով: Զարմանալ կարելի է, թե ինչպես է անբանաստեղծական նյութը բանաստեղծացնում նա կամ փոքր մարդկանց կյանքին, ճակատագրին այդպես մանրակրկիտ «հետեւում»՝

*«Ամէն ինչ մեծ է մեծ քաղաքին մէջ*
*ցաւը մեծ*
*պողոտաներուն ու շէնքերուն նման*
*Ու անոնք որոնք պզտիկ մարդիկ են*
*Երբեք հանդարտ պիտի չըլլան*
*մեծ քաղաքի մէջ:*

Զահրատի բանաստեղծության հերոսներից ամենանշանավորը՝ Կիկոն, Երվանդ Ազատյանի բնորոշմամբ, «չափլինեան տիպար է, իր միամտութեան մէջ փիլիսոփայ եւ իր փիլիսոփայութեան մէջ՝ միամիտ... Զահրատը իր Կիկոյով կը ստեղծէ շագալեան ֆանթէզիի միամիտ աշխարհ մը, ուր կ՛անտեսուին երկրին ձգողական օրէնքները, չափերը, համեմատութիւնները, նոյնիսկ մահու եւ կենաց անյեղլի օրէնքները...»:

Եզրափակենք մեր այս անդրադարձը պոլսահայ բանաստեղծ Իգնա Սարըասլանի ուղերձի խոսքերով. «Դուն մտերիմ եւ տաք, պարզ ու անսեթեւեթ ձայնով, ժողովրդային լեզուով պզտիկ մարդոց աննշան ապրումներէն կերտեցիր մեծ աշխարհներու նշանակելի բանաստեղծութիւնը:

... Զահրատի բանաստեղծութիւնը կը նմանեցնեմ աչքի մը: Աչքի մը պէս պարզ, բայց աչքի մը պէս խորիմաստ, աչքի մը չափ գեղեցիկ, աչքի մը չափ մարդկային: Ծովերու, ովկիաններու նմանող աչք մը ծովերու, ովկիաններու բացուող, ծովերու, ովկիաններու խառնուող աչք մը...»:

ՍԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

---

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄ

## Նինա Կարապետյանի եւ Հենրիխ Պետրոսյանի բարեգործական համերգը

**Փետրվարի 17-ին Հայ եկեղեցու Վիրահայոց թեմի «Հայարտուն» մշակույթի կենտրոնի «Գ. Գյուլբենկյան» սրահում կայացավ սիրիահայերի օգնության հերթական բարեգործական միջոցառումը: Թբիլիսահայ շնորհալի կատարողներ Նինա Կարապետյան-Գեւորգյանը եւ Հենրիխ Պետրոսյանը հանդես եկան համերգով:**

**Երկու ճանաչված կատարողները բազմիցս են մասնակցել մրցույթ-փառատոների ինչպես Վրաստանում, այնպես էլ մայր հայրենիքում: Նրանք պարգեւատրվել են մեդալներով, արժանացել դիպլոմների եւ դափնեկրի կոչման:**

**Միասին համերգային ծրագրով ելույթը նորություն չէր այս զույգի համար: Դեռեւս 2011 թվականի ապրիլի 23-ին Նինա Կարապետյան-Գեւորգյանը եւ Հենրիխ Պետրոսյանը համատեղ մենահամերգով ելույթ ունեցան Թբիլիսիի Նոդար Դումբաձեի անվան պատանի հանդիսատեսի թատրոնում, որն անցավ մեծ հաջողությամբ:**

**Արձագանքելով սիրիահայերին օգնելու կոչին, Նինա Կարապետյան-Գեւորգյանը եւ Հենրիխ Պետրոսյանը վճռեցին իրենց մասնակցությունը բերել բարեգործական ակցիային:**

**«Գալուստ Գյուլբենկյան» սրահը լեփ-լեցուն էր հանդիսատեսով: Համերգի ժամանակ հնչեցին ժողովրդական, հայրենասիրական եւ էստրադային երգեր, ռոկ կատարումներ, որոնք հանդիսատեսի կողմից ընդունվում էին բուռն ծափահարություններով: Երգերն ուղեկցվում էին «Զեյրան» եւ «Անի» պարային համույթների աղջիկների նազելի պարերով:**

**Համերգի ժամանակ կատարվեց հանգանակություն: Ողջ նվիրատվությունը փոխանցվեց սիրիահայերի օգնությանը:**

## Հանդիպում վիրահայ օտարալեզու ստեղծագործողների հետ

**«Օտարալեզու, բայց ոչ օտար հայ ստեղծագործողներ», այսպես էր կոչվում Վիրահայոց թեմի «Հայարտուն» մշակույթի կենտրոնի «Գալուստ Գյուլբենկյան» սրահում փետրվարի 16-ին կայացած գրական երեկոն, որի նախաձեռնողը եւ կազմակերպիչը Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միությունն էր «Հայարտուն» մշակույթի կենտրոնի աջակցությամբ:**

**Բացելով երեկոն, Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միության նախագահ Գեւորգ Սնխչյանը ներկայացրեց այն ստեղծագործողներին, ովքեր թեեւ օտարագիր են, սակայն ոգով հայ են, նրանց մտածելակերպը հայկական է, ստեղծագործությունների ակունքը, թեման եւ գաղափարը՝ ազգային: Նա ներկայացրեց Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միության անդամներ ռուսերեն ստեղծագործող Մարինա Կիրակոսյան-Մոսեսովային, Միքայել Անանովին, Արտեմ Գրիգորենցին (Կիրակոզով) եւ վրացագիր Գարի Ղալամքարովին:**

**«Կամուրջ» գրական մշակութային հասարակական կազմակերպության նախագահ, բանաստեղծ-թարգմանիչ Անահիտ Բոստանջյանը հանգամանալից խոսելով բոլոր օտարագիր ստեղծագործողների մասին, կարեւորեց նրանց գրչի ինքնատիպությունը, թբիլիսյան կոլորիտի հյութեղ նկարագրությունը, հայկական շնչով տոգորված հարուստ եւ խոհական գրական աշխարհը: Անահիտ Բոստանջյանը բարձր գնահատեց օտարագիր գրողների ստեղծագործությունների հայերեն թարգմանության գործի առաջընթացը, արժեւորելով հայտնի բանաստեղծ Արա Արթյանի փայլուն թարգմանությամբ Մարինա Կիրակոսյան-Մոսեսովայի բանաստեղծությունների հայերեն հրատարակությունը: Նա ընթերցեց նաեւ այս ստեղծագործողների գործերից կատարած իր թարգմանությունները:**

**Այնուհետեւ վերոնշյալ ստեղծագործողները հանդես եկան իրենց գործերի ընթերցմամբ:**

**Երեկոն ուղեկցվեց Կարեն Միրզոյանի դաշնամուրային նվագով եւ համեմված էր Աննա Պողոսովայի եւ Ռուբեն Ոսկանյանի կատարմամբ երգերով:**

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ
ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ

# Անպարտելի Վանեսի հերթական մրցակիցը Խավիեր Մասիելն է



26-ամյա հայ պրոֆեսիոնալ բռնցքամարտիկ Վանես Մարտիրոսյանը հերթական մենամարտը կանցկացնի ապրիլի 6-ին Չինաստանի Մակաո քաղաքում կայանալիք բռնցքամարտի երեկոյի շրջանակում: Վանեսի մրցակիցը կլինի միջինքաշային կարգում աշխարհի չեմպիոնի տիտղոսի նախկին հավակնորդ, 28-ամյա արգենտինացի Խավիեր Մասիելը: Վերջինս 2011-ի մարտին աշխարհի չեմպիոնի տիտղոսն էր վիճարկել ռուսաստանցի Դմիտրի Պիրոգի հետ:

Այդ օրը ռինգ դուրս կգան նաեւ թեթեւագույնքաշային կարգում WBA-ի եւ WBO-ի վարկածներով աշխարհի չեմպիոն Բրայան Վիլորիան, առաջին կիսամիջինքաշային կարգում աշխարհի նախկին չեմպիոն Վիլֆրեդո Վասկեսը, 2-րդ կիսամիջինքաշային կարգում WBO-ի վարկածով աշխարհի չեմպիոն Ռոման Մարտինեսը: Բացի նրանցից ռինգ դուրս կգա նաեւ 2008-ի Պեկինի եւ 2012-ի Լոնդոնի օլիմպիադաների չեմպիոն, չինացի Ցզոու Շիմինը՝ նորամուտը նշելով պրոֆեսիոնալ բռնցքամարտում:

Վանես Մարտիրոսյանի մրցակիցը պրոֆեսիոնալ ռինգում 27 մենամարտ է անցկացրել, որից 25-ում հաղթել է, 2-ում պարտվել է: Իսկ ահա հայ բռնցքամարտիկը պրոֆեսիոնալ ռինգում առայժմ անպարտելի է՝ շահելով 32 մենամարտ, մեկն ավարտելով ոչ-ոքի: Միակ ոչ-ոքին գրանցվել էր կուբացի Էրիսլանդի Լարայի հետ անցյալ տարվա նոյեմբերին կայացած մենամարտում, որում Վանեսը վնասվածք էր ստացել ու մենամարտը դադարեցվել էր: WBC-ի ղեկավարությունը մրցակիցների միջեւ 2-րդն մենամարտն էր նշանակել, որի հաղթողը պետք է WBC-ի չեմպիոնական գոտին վիճարկեր առաջին միջինքաշային կարգում աշխարհի ներկայիս չեմպիոն, մեքսիկացի Սաուլ Ալվարեսի հետ: 2-րդ մենամարտը պետք է կայանար փետրվարին, սակայն շատերի համար անսպասելի Վանեսը հրաժարվել էր ռինգ դուրս գալ նշված ժամկետում, նշելով, որ միայն մարտի 1-ից հետո է նպատակահարմար հանդիպել կուբացու հետ:

Այդպես Վանես Մարտիրոսյանը զրկվեց աշխարհի չեմպիոնի տիտղոսի համար պայքարելու հնարավորությունից: Սաուլ Ալվարեսն աշխարհի չեմպիոնի իր տիտղոսը պետք է պաշտպանի մայիսի 4-ին: Առայժմ WBC-ի ղեկավարությունը չի որոշել, թե ով է լինելու Ալվարեսի մրցակիցը: Բացառված չէ, որ Լարային հնարավորություն ընձեռվի առանց ընտրական մենամարտի միանգամից վիճարկելու աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Հնարավոր է նաեւ, որ Ալվարեսը հանդիպի Լարա-Սերգեյ Բաբչենկո զույգի հաղթողի հետ:

# Որոշվեցին պատանեկան հավաքականի թեկնածուները



Մայրաքաղաքի «Միկա» մարզասրահում ավարտվեց ձյուդոյի պատանեկան վարկանիշային մրցաշարը, որը նվիրված էր Հայաստանում մարզաձեւի հիմնադրման 40-ամյակին: Պատանի ձյուդոիստներն իրենց հարաբերությունները պարզեցին քաշային 6 կարգերում, որոնցում բավականին սուր մրցակցություն ծավալվեց:

Մինչեւ 50 կգ քաշային կարգում ուժեղագույնը ճանաչվեց Դավիթ Խաչատրյանը, որը եզրափակիչում պարտության մատնեց Գոռ Հակոբյանին: Քաշային հաջորդ կարգում էլ (55 կգ) ուժեղագույնը Նոր Հաճընից էր՝ Վահե Ղազարյանը, որը վճռորոշ գոտեմարտում հաղթեց Նարեկ Միրիջանյանին:

Մինչեւ 60 կգ քաշայինների մրցավեճում լավագույնն աբովյանցի Ռոբերտ Գաբրիելյանն էր, որը պարտության մատնեց Գեւորգ Խիթարյանին: Աբովյանի մյուս ներկայացուցիչը՝ Նարեկ Շատվերյանը հաղթող դարձավ մինչեւ 66 կգ քաշային կարգում՝ առավելության հասնելով Կառլեն Ղազարյանի նկատմամբ: Քաշային մյուս 2 կարգերում ուժեղագույնը ճանաչվեցին արմավիրցիներ Տիգրան Օհանյանը (73) եւ Նաիրի Կարապետյանը (գերծանր քաշ): Տիգրանը եզրափակիչում հաղթեց Ավետիք Գրիգորյանին, իսկ Նաիրին պարտության մատնեց Դավիթ Դադիկյանին:

Մրցաշարի մրցանակակիրները պարգեւատրվեցին պատվոգրերով եւ հուշանվերներով: Ծննդյան 60-ամյակի առիթով ձյուդոյի հանրապետական ֆեդերացիայի նախագահ Վարդան Ոսկանյանը հատուկ պատվոգրով եւ հուշանվերով պարգեւատրեց վաստակաշատ մարզիչ Գագիկ Աղամալյանին:

Վարկանիշային մրցաշարը մեր պատանի ձյուդոիստների համար ուժերի լավ ստուգատես էր մարտի 8-10-ը Զագրեբում եւ 15-17-ը Անթալիայում կայանալիք պատանիների Եվրոպայի գավաթի խաղարկության փուլերից առաջ:

# ՖԻԼԱ-ի նախագահը պաշտոնանկ արվեց

Թաիլանդի Պատայա քաղաքում անցկացված ըմբշամարտի միջազգային ֆեդերացիայի (ՖԻԼԱ) նախագահության արտահերթ նիստում պաշտոնանկ է արվել այդ կազմակերպության նախագահ Ռաֆայել Մարտինետին: Նրա պաշտոնանկությունը հնարավոր դարձավ մեկ ձայնի առավելության շնորհիվ (11 կողմ, 10 դեմ): Նոր նախագահի ընտրությունները նախատեսված են ապրիլի վերջին կամ մայիսի սկզբին Մոսկվայում կայանալիք ՖԻԼԱ-ի արտահերթ նստաշրջանում: Իսկ մինչ այդ աշխատանքները կղեկավարի ստեղծված ճգնաժամային կոմիտեն, որը գլխավորում է մարզաձեւի Ռուսաստանի ֆեդերացիայի նախագահ Միխայիլ Մամիաշվիլին: Կոմիտեի կազմում ընդգրկվել է նաեւ օլիմպիական խաղերի եռակի չեմպիոն, ՌԴ Պետդումայի պատգամավոր Ալեքսանդր Կարելինը:

Այսպես ըմբշամարտի աշխարհն արձագանքեց ՄՕԿ-ի գործկոմի այն որոշմանը, որով նախատեսվում է ըմբշամարտը հանել 2020-ի ամառային օլիմպիական խաղերի ծրագրից: Շատերի կարծիքով, հենց Մարտինետիի պաշտոնավարության տարիներին ըմբշամարտը կորցրեց իր գրավչությունը:

Շվեյցարիայում մետաղակոնստրուկցիաների գործարանի սեփականատեր Ռաֆայել Մարտինետին ՖԻԼԱ-ի նախագահի պաշտոնը ստանձնել էր 2002-ին՝ փոխարինելով հարավսլավացի Միլան Էրցեգանին:



# Կարեն Գրիգորյանի գերազանց մեկնարկը



Ֆրանսիայի Ռոշֆոր քաղաքում անցկացվող շախմատի մրցաշարում հաջող են հանդես գալիս Հայաստանը ներկայացնող միջազգային վարպետ Կարեն Գրիգորյանը եւ գրոսմայստեր Սամվել Տեր-Սահակյանը: Կարենը մեկնարկում 3 անընդմեջ հաղթանակ է տոնել ու միանձնյա գլխավորում է աղյուսակը: Նա պարտության է մատնել Ֆիլիպ Մայերին, Դանիել Պուլվետին եւ Ռագհուրամա Պրասաննային: Սամվելն իր հայրենակցին կես միավոր է զիջում: Նա հաղթել է Սլավիսա Պերիչին ու Միոդրագ Թոդորչեւիչին եւ հաշտություն է կնքել Ալեքսեյ Բարսովի հետ:

4-րդ տուրում Կարեն Գրիգորյանը (2531) կմրցի մրցաշարի մասնակիցներից ամենաբարձր անհատական վարկանիշն (2657) ունեցող, Ֆրանսիան ներկայացնող գրոսմայստեր Անդրեյ Իստրատեսկուի հետ, որն ունի 2,5 միավոր: Տեր-Սահակյանի մրցակիցը կլինի ռումինացի Վլադ-Քրիստիան Ջիանուն:

B խմբի մրցաշարում հանդես եկող ֆրանսահայ շախմատիստ Գուրգեն (Գի) Հազարապետյանը 3 տուրից հետո վաստակել է 1 միավոր: 3-ական միավորով աղյուսակը գլխավորում են 6 շախմատիստներ:

# Նալբանդյանը հասավ մինչեւ եզրափակիչ

Բրազիլական Սան Պաուլու քաղաքում անցկացված թենիսի մրցաշարում Դավիթ Նալբանդյանը հասավ մինչեւ եզրափակիչ, որտեղ 2-6, 3-6 հաշվով պարտվեց իսպանացի Ռաֆայել Նադալին: Եզրափակիչի ճանապարհին Դավիթը քառորդ եզրափակիչում հաղթել էր իսպանացի Նիկոլաս Ալմագրոյին (7-6, 3-6, 7-6), իսկ կիսաեզրափակիչում առավելության էր հասել իտալացի Սիմոնե Բոլելիի նկատմամբ (6-3, 7-5):

# Աչքի ընկան լեգեոնականները

Անթալիայում մարզվող Գյումրու «Շիրակը» ստուգողական խաղում 2-0 հաշվով հաղթեց Չեռնոգորիայի առաջնության բարձրագույն խմբում հանդես եկող «Եդինստվոյին»: Թիմի կազմում աչքի ընկան լեգեոնականները: Առաջին խաղակեսում հաշիվը բացեց Դամե Դիոպը, ընդմիջումից հետո գլխի հարվածով 2-րդ գոլի հեղինակ դարձավ «Շիրակում» փորձաշրջան անցնող Ջորջ Օդիմբոն:

# «Գանձասարին» չի հաջողվում հաղթանակ տոնել

Թուրքիայի Բելեք քաղաքում ուսումնամարզական հավաքի շրջանակներում Կապանի «Գանձասարը» ստուգողական հերթական հանդիպումներն անցկացրեց, որոնցում կրկին չկարողացավ հաղթել: Առաջին խաղում մրցակիցը Ղազախստանի «Օկժետպեսն» էր: Թեեւ խաղն անցավ կապանցիների զգալի առավելությամբ, սակայն գրանցվեց գոլազուրկ ոչ-ոքի: Միայն 2 անգամ գնդակը դիպավ դարպասաձողին, մի քանի դրվագներում էլ հաջող խաղաց մրցակցի դարպասապահը:

Հաջորդ օրը «Գանձասարն» ուժերը չափեց Ռումինիայի բարձրագույն խմբի առաջնության մասնակից Կլուժի «Ունիվերսիտատի» հետ ու պարտվեց 1-2 հաշվով: Հաշիվը բացեց «Գանձասարի» նորեկ, բրազիլացի Ուլիան Պոսկերը, սակայն հետագայում ռումինացիները 2 գոլ խփեցին ու հաղթեցին:

Խաղն անցավ հորդառատ անձրեւի ուղեկցությամբ, պայքարն էլ խաղադաշտում բավականին կոպիտ էր: Դրա հետեւանքով վնասվածք ստացավ Սամվել Մելքոնյանը, իսկ Գորան Օբրադովիչն ու Ուլիան Պոսկերը հեռացվեցին խաղադաշտից: Սակայն քանի որ խաղը ստուգողական էր, նրանց փոխարեն խաղադաշտ դուրս եկան այլ ֆուտբոլիստներ: Վնասվածքների պատճառով հանդիպմանը չմասնակցեցին գանձասարցիներ Արտակ Դաշյանն ու Նոա Կասուլեն:

Բելեքում «Գանձասարը» նախատեսում է եւս 3 ստուգողական խաղ անցկացնել:

# «Իմպուլսը» չիրացրեց գոլային պահերը

Կիպրոսում Դիլիջանի «Իմպուլսը» ստուգողական խաղում ոչ-ոքի (1-1) ավարտեց հանդիպումը Սոֆիայի «Լեւսկու» հետ, որը Բուլղարիայի ընթացիկ առաջնությունում ընթանում է 2-րդ տեղում: Արդեն 9-րդ րոպեին Դիեգո Կաստրոյի փոխանցումից հետո առաջնության լավագույն ռմբարկու Նորայր Գյոզալյանը բացեց հաշիվը: 28-րդ րոպեին մրցակիցը վերականգնեց հավասարակշռությունը: Իլիան Յորդանովի հարվածից հետո գնդակը դիպավ «Իմպուլսի» պաշտպան Մաքսիմ Պուզանովին եւ շեղելով ուղղությունը, հայտնվեց դարպասում:

2-րդ խաղակեսում «Իմպուլսից» կարող էին աչքի ընկնել Գյոզալյանն ու Կաստրոն, սակայն հաջող խաղաց մրցակցի դարպասապահը: Այս խաղում «Իմպուլսի» կազմում էին թիմում փորձաշրջան անցնող Կոնստանտին Մանդրիչենկոն եւ բելգիահայ պատանի ֆուտբոլիստ Զաքար Օքմեզը: Նշենք, որ Մանդրիչենկոն անցյալ տարի որոշ ժամանակ վարձավճարով հանդես էր գալիս «Իմպուլսում»:

# Գոլազուրկ ոչ-ոքի

«Բանանցն» էլ Կիպրոսում իր առաջին խաղն անցկացրեց ուսումնամարզական 2-րդ հավաքի ժամանակ: Մեր թիմը մրցեց «Ուֆայի» հետ: Գրանցվեց գոլազուրկ ոչ-ոքի: Մրցավեճին մասնակցեցին «Բանանցում» փորձաշրջան անցնող բրազիլացի 2 ֆուտբոլիստներ, ինչպես նաեւ ուկրաինացի Պավլո Գրիշչենկոն: Վերջինս կարիերան սկսել է Դոնեցկի «Օլիմպիկում», ապա տեղափոխվել է «Մետալուրգ», որի կազմում նորամուտը նշել է «Բանանցի» ներկայիս գլխավոր մարզիչ Վլադիմիր Պյատենկոյի գլխավորությամբ: Գրիշչենկոն հանդես է եկել նաեւ Ալչեւսկի «Ստալում»:

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

